№ 1 (199) XIX ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍԱՐ 1909

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

1908—1909

Ցամաք ու անդուլ շարունակուեց Իրաւունքի վսեմ պայքարը անիրաւութեան ու ստրկութեան դէմ։ 1908 թուականը ոսկէ տառերով կ'արձանագրուի տիեզերական պատմութեան էջերում։ Ազատութեան դատը փայլուն, հազուագիւտ վաստակ ունեցաւ. նոր հորիզոններ բացուեցին նրա առջև, մարդկային նոր զանգուածներ վեր բարձրացան մրափի ու անէութեան անդունդներից և գրկեցին համամարդկային քաղաքակրթութեան դրօշը։

Կարլայլեան „մեծ, անլեզու համրն" էր, որ շղթայաւորած ասպարէզ նետուեց, նոր կեանքի ու առաջադիմութեան գրաւականով։ Հին արևելքն էր, որ կոնֆուցիոսների անյիշատակ ժամանակից ի վեր առաջին անգամ արտադրում էր մի այդպիսի առնական թռիչք, առաջին անգամ յաղթականօրէն ծանուցանում էր Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան պանծալի սկզբունքները։ Հին Արևելքն էր դա, որ մի ժամանակ տուել էր աշխարհին մտքի, արուեստի անհատնում գանձեր, բայց որ յետոյ, բախտի մի քմահաճ տնօրինութեամբ, մի արատաւոր յետաշրջումով վերստին նետուել էր ֆատալիստական անշարժութեան ծոցը, ուր և խարխափում էր տասնեակ դարերով, ստրուկ, անարգ ու արգահատելի, որպէս զազիր պարիաների մի անմուունչ հօտ, որպէս քարացած մի վիթխարի։

Ռամկավարութիւնը աճեց, հարստացաւ նոր փառահեղ նուաճումով, արդարութեան ու միջազգային եղբայրակցութեան դարաւոր յոյսը նոր յորձանք տուեց և տիեզերական բռնապետութեան սև ուրուականը զարհուրանքով մի քայլ ևս յետ նահանջեց, — մի խոշոր քայլ՝ նրա համար ճակատագրական ու աղէտաբեր...

Արևմտեան բռնակալութիւնը—թէ միագլխեան, թէ բազմագլխեան—մեծ յոյսեր ունէր իր արևելեան եղբայրակցի վրայ՝ իր գոյութիւնը մշանջենաւորելու համար։ Հարստացած դարաւոր փորձով, նրբացած և հզօրապէս օժանդակուած կապիտալիզմի պարգևներով՝ նա ձգտում էր իր կեղեքիչ տիրապետութեանը ենթարկել ամբողջ վայրենի ու բարբարոս երկրագունդը, ամբողջ հեռաւոր ու մերձաւոր Արևելքը, ձգտում էր ամրապնդել շղթաները այն բոլոր հում, նահապետական ժողովուրդների, որոնք քանի դեռ դեգերում են ստրկական մրափի մէջ, անսահման շահագործման նիւթ են մատակարարում քաղաքակրթուած գիշատիչներին, իսկ երբ արթնացան, սթափուեցին, իրենց ձեռքն առան իրենց սեփական ճակատագիրը, երբ բողբոջեց նրանց գրկում սեփական նախաձեռնութեան շինարար ոգին, երբ նրանք զարկ տուին իրենց ուրոյն կուլտուրային, ստեղծեցին իրենց ուրոյն ինդուստրիան, արդիւնաբերութիւնը, փոխառնելով Արևմուտքից անհրաժեշտագոյն գործօնները, երբ այդ տրորուած, նահապետական ազգութիւնները միահեծան տէր դարձան իրենց սեփական հողերին, հանքերին, հարստութիւններին—դա արդէն „սկիզբն է վերջաւորութեան"... Արևմտեան կապիտալիզմը, որ իր գոյութիւնը յարատևելու համար, միշտ աւելի ու աւելի հարկադրուած է „արտահանել", նոր հորիզոններ նուաճել, որ հարկադրուած է միլիտարիզմի, յարաճուն զինաւորութեան և հսկայական զոհերի գնով նորանոր սպառող շուկաներ գրաւել իր անարխիական արդիւնաբերութեան լեռնացած պտուղները շահեցնելու համար — պէտք է այլ ևս կամաց-կամաց յետ նահանջի, պէտք է հետզհետէ հրաժեշտ տայ „համաշխարհային շուկային", գաղութներին, բոլոր „վայրենի ժողովուրդներին", բոլոր „կաթնատու կովերին", պէտք է ամփոփուի իր մայրերկրում, մայր-պետութիւնների շրջանակներում.. որոնք չափազանց անձուկ լինելով, վերջ ի վերջոյ պիտի ճայթին աշխարհաշառաչ տագնապներով ու սոցիալական ժայթքումներով..

Այդպէս է մեծ, անզուգական կարևորութիւնը այն յեղաշրջման, որ կատարուեց անցեալ տարուայ յուլիսին մերձաւոր Արևելքում և որ արդէն զգալ է տալիս իր ուժգին, անխուսափելի անդրադարձումը ամբողջ արևելեան, նոյնիսկ ամբողջ ասիական ու աֆրիկական մարդկութեան վրայ։

*

Արևմուտքը, ի դէմս իր ռամկավար, ազատասէր տարրերի, մի վայրկեան ցաւոտ նախանձի շարժում ունեցաւ հանդէպ Արևելքի այդ յանկարծական ու հպարտ սլացքի։ Պառաւ Եւրոպան զբաղուած էր մանր հաշիւներով, այնտեղ վաղուց ընդհատուել է բարձրա-

թռիչ մարզանքների ու մեծադղորդ վերիվայրումների ժխորը. ռամկավարութեան առաջին նուաճումները մեղմել են ժողովուրդների ատելութիւնն ու թափը, միջակցրել, մանրացրել են պայքարը։ Մի վայրկեան միայն Արևմուտքը ցնցւեց և դա Գերմանիայում տեղի ունեցած մի անակնկալի ազդեցութեան տակ էր։ Ցասկոտ ու քմահաճ վեհապետը էլի մի խոշոր „բլըֆ“ էր արել և ֆէոդալական, կիսամիապետական Գերմանիան ծայրէ-ծայր ալէկոծւել էր։ Երկիրը միաբերան պահանջում էր վերջ դնել „անձնական ռէժիմին“, սանձահարել վեհապետի քմահաճոյքը, որ վտանգում է երկրի շահերը, որ կարող է հասցնել աղէտալի հետևանքների։ Թւում էր, թէ վայրկեանը հասել էր և եւրոպական ցամաքի ամենաուժեղ պետութեան մէջ, միլիտարիզմի դասական որբանում պիտի սահմանւէր ճշմարիտ պարլամենտարիզմ, պիտի վերացւէր Վիլհելմ-Բիւլօվեան կամայապետութիւնը և պիտի հռչակւէր, վերջապէս, մինիստրների իրական պատասխանատուութիւնը՝ ժողովրդական պատգամաւորութեան, Ռայխստագի առջև։ Եւ այդ յեղաշրջումը համաշխարհային կշիռ ունեցող մի փաստ կը լինէր. երկիրը կ'ազատւէր մի միապետի անձնական ռէժիմի պատուհասներից, — միապետի՝ որ լինելով մի ահեղ բանակի բացարձակ տերը, չարիք է դարձել միջազգային խաղաղութեան համար, որ այնքան յաճախ գրգռել ու փոթորկել է պետութիւնների յարաբերութիւնները, մերթ Տրանսվալի նախագահին հեռագիր տալով, Անգլիայի դէմ նրան խրախուսելով, ապա ձգելով նոյն Տրանսվալը իր ճակատագրին, մերթ դաւելով Ֆրանսիայի դէմ Մարոկկոյում, թատրոնական հարուածներ սարքելով ու Եւրոպան սարսափի մատնելով.. և միաժամանակ միշտ ռէակցիայի պարագլուխ հանդիսանալով, բոլոր արիւնոտ բռնաւորներին — Աբդիւլ Համիդին, Նիկոլա II-ին — քաջալերելով ու աջակցելով... Ահա այդ մեծ, աշխարհի վրայ ծանրացած չարիքն էր, որ պիտի բառնար քաղաքական յեղաշրջումը։

Այդպէս չեղաւ, տարաբախտաբար. ազգային-ազատամիտ ու այլ կուսակցութիւնները, որոնք 50 տարուց ի վեր սիրով ճառում են լիբերալիզմի ու ժողովրդական իրաւունքների մասին, այս անգամ ևս դասալիք եղան ազատութեան ճակատամարտից. վճռական վայրկեանին պաղեց նրանց փքուն ու աղմկոտ խանդավառութիւնը և նրանք յետ նահանջեցին, գոհանալով Վիլհելմ II-ի շպրտած մի քանի զիջումներով։

Տարակոյս չը կայ, այդ զիջումները ևս, իբրև ժողովրդական մի յաղթանակ, ունին իրենց ծանրակշռ, պատմական նշանակութիւնը. մենք տեսանք, թէ ինչպէս աշխարհի ամենահզօր, ամենագոռոզ հրամանատարներից մէկը իր սեփական կայսրութեան ամենաբարձր հաստատութեան մէջ յաչս ամբողջ աշխարհի մտրակւելուց, ծաղրւելուց ու անպատւելուց յետոյ, հանդիսաւոր „մեղա՛յ“ էր գոչում իր ժողովրդի առաջ, հանդիսաւոր խոստում էր տալիս՝ երբէք այլ ևս ինքնագլուխ չը բռնել պատասխանատու որևէ գործ և չը խռովել երկրի անդորրութիւնը... Դա մի չափազանց ծանր վայրկեան էր մեծամոլութեան ախտով տառապող մի կայսրի համար և հօհէնցօլլերնեան արքայատոհմը չէր կրել այդքան ստորացուցիչ մի անարգանք վաթսուն տարուց ի վեր, սկսած 1848-ի անմոռանալի, կարմիր օրերից, երբ ապստամբների գոռում-գոչիւնի մէջ, նրանց պահանջով՝ թագաւորը ահաբեկւած պատշգամ ելաւ և խոնարհաբար ողջոյն տւեց փողոցում փռւած ազատութեան նահատակների դիակներին։ Գերմանիայի այժմեան կայսրը ևս, իր դիրքը պահպանելու համար բարոյք համարեց նւաստանալ, խոնարհւել ժողովրդի կամքի առջև, բայց գերմանական ժողովուրդը քաղաքականապէս ու հոգեպէս բաւականաչափ արի չը գտնւեց, որպէս զի ըստ արժանւոյն շահագործէր հազւագիւտ վայրկեանը և հասցնէր սկսւած փոթորիկը իր ցանկալի ու տրամաբանական վախճանին։ Միակ սօցիալիստական կուսակցութիւնն էր, որ գտնւեց կացութեան բարձրութեան վրայ և ձևակերպեց Ռայխստագի ու ժամուլի մէջ՝ երկրի կազմը հիմնականապէս բարեփոխելու անհրաժեշտ պահանջը։ Բայց սօցիալ-դեմօկրատիային էլ պակասեց, ըստ աւանդութեան, կռւի կրակը... Այդպիսով Գերմանիայում ճշմարիտ սահմանադրական կարգեր հաստատելու մեծ խնդիրը մի անգամ ևս յետաձգւեց անորոշ ժամանակով, մի անգամ ևս հիասթափութիւն ու ցաւ բերելով այն բոլոր անհատներին, որոնց հոգին խռովւում է ի տես այնպիսի ժամանակագրական մի սխալի, ինչպէս այդ ֆէոդալ-բռնապետական ուժի գոյութիւնը Կանտի ու Հիլլերի հայրենիքում, 60 տարի անդրանիկ ազատագրական շարժումից յետոյ և 120 տարի յետոյ՝ ֆրանսիական մեծ ցեղափոխութիւնից...

Ի՞նչ արած... Ծանր, յաճախ գրեթէ յուսահատեցուցիչ դանդաղութեամբ է ընթանում համաշխարհային պրոգրէսի (առաջադիմութեան) անիւը. մարդկային հոծ զանգւածներին շարժել-մղելը յանուն ապագայ մեծ իդէալների, անգամ յանուն իրենց առօրեայ կենսական շահերի — դիւրութեամբ չի լինում։ Հնապաշտութեան, „նորատեցութեան“ (misonéisme) մի խոշոր բաժին մնում է տակաւին այդ զանգւածների արիւնի մէջ... Եւ այդ իներտ, կոյր, կամակոր անշարժութեան մէջ են բռնաւորները գտնում միշտ իրենց կենսունակութեան ու բարգաւաճման սնունդը...

Կռիւը, այնուամենայնիւ, առաջ մղւեց 1908 թւականին նաև արևմտեան Եւրոպայում, շօշափելի յաղթանակներով ու նուաճումներով։ Եւ համարձակ կարելի է ասել, ամենուրեք սօցիալիստական բանակներն էին խթան լինում այդ նորանոր նուաճումների։

Ֆրանսիայում մասնաւորապէս մենք ականատես եղանք մի ուշագրաւ ու խրատական երևոյթի։ Ռադիկալիզմը (արմատական հոսանքը), որ տասնեակ տարիներից ի վեր հմայում էր ինքզինքը որպէս հաւատարիմ ժառանգ ու շարունակող Մեծ Յեղափոխութեան աւանդութիւնների՝ մերկացրեց իր ներքին բուրժուազական էութիւնը, հէնց որ միահեծան տէր դարձաւ երկրի ճակատագրի։ Յանձին իր „ամենածայրայեղ“ թևի, յանձին Կլեմանսօի մինիստրութեան՝ նա դրժեց մի քանիսը այդ փառահեղ աւանդութիւններից, սկսեց արշաւանք բանւորական, սօցիալիստական համախմբումների դէմ, զօրքի միջամտութեամբ ու արիւնհեղութիւններով ճնշեց գիւղացիական ու բանւորական գործադուլները, ապացուցանելով իր այդ ընթացքով, որ բուրժուազիան նոյնիսկ ի դէմս ամենաարմատական իր հատուածի՝ խորապէս պահպանողական է, յարգող դասակարգային առանձնաշնորհումների, սրբագործող դասակարգերի անհաւասարութեան. „Արմատականութիւնը“, ճիշտ է, իրագործել է որոշ կարևոր բարենորոգումներ, թերևս պիտի իրագործէ և ապագայում. սակայն նա իր ներքին էութեամբ դարձեալ թշնամի է աշխատաւոր ժողովրդի լիակատար ազատագրութեան, թշնամի է, քանի որ պահպանում, նուիրագործում է կապիտալիստական մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որից բղխում են ժամանակակից անիրաւութիւնները, մասսաների ստրկացումն ու թշուառութիւնը...

Եւ — ուշագրաւ հանգամանք — ֆրանսիական խոշոր բուրժուազիան, միլիարդների, պերճանքի ու շայտութեան այդ դասակարգը, որ տասնեակ տարիներից ի վեր սարսափում էր բադիկալիզմից ու մասնաւորապէս Կլեմանսօյից, տեսնելով նրա մէջ վաղեմի կարմիր ուրուականը—այսօր ուրախութեան ծափ է զարկում, և պարլամենտի ու իր քսու մամուլի մէջ յաճախ ջերմօրէն պաշտպանում է նոյն Կլեմանսօյին, որ թւում է նրան իսկական „փրկիչ“, իր կոպիտ ու վայրագ արշաւանքով բանւորական պահանջների ու սօցիալիստական վարդապետութեան դէմ։ Միւս կողմից աշխատաւոր ժողովրդի անկեղծ բարեկամները բոլոր երկրներում զգացին — անցեալ տարի աւելի ուժգնութեամբ, քան երբևիցէ— որ տնտեսական ճշմարիտ, լիակատար ազատագրութիւնը սօցիալիզմի գաղափարի մէջ է, որ պիտի ընթանայ համատարած, աշխարհակալող պրօպագանդով, յենուած բանւորութեան, գիւղացիութեան, արհեստաւորութեան ու մտաւորականութեան անվթար ու գիտակից տարրերի վրայ, կուելով մշանջենապէս ձրիակեր դասակարգերի դէմ, պաշտպանելով մշանջենապէս աշխատանքի սրբազան դատը՝ ընդդէմ կապիտալի առանձնաշնորհումների...

Ռադիկալիզմի ամենակարող պարագլուխը, մինիստր-նախագահ Կլեմանսօն ուխտագրուժ եղաւ ոչ միայն ներքին, այլ և արտաքին քաղաքականութեան էական հարցերում։ Նախկին կատաղի յեղափոխականը, նա որ քանիցս, յանուն ռամկավարութեան ու միջազգային արդարութեան բողոքել էր „գաղութային արշաւանքների“ ու նորանոր նուաճումների դէմ, նոյնիսկ տապալել էր ամբողջ մինիստրութիւններ—մէկէնիմէկ նա ինքը դարձաւ գաղութային բաղաքականութեան ռահվիրայ և երկար ամիսների ընթացքում տանջեց երկիրը Մարօկկոյի վտանգաւոր արկածներով, որոնք սպառնում էին համաեւրօպական հրդեհ յարուցանել։ Այդտեղ ևս, սօցիալիզմն էր, որ յանձին Ժօրէսների ու Պրեսսանսէների, զարկեց ահազանգը, շարունակական հարցապնդումներով յուզեց հանրային կարծիքը, մամուլի ու հրապարակական ժողովների մէջ անդադար նշաւակեց ֆրանսիական կառավարութեան տմարդի ընթացքը, Մարօկկոյի դժբախտ ժողովրդի անխնայ ու մասսային գընդակահարումները՝ յանուն մի բուռն ընչաքաղց կապիտալիստների շահերի։

Եւ սօցիալիստական այդ արշաւանքն ապարդիւն չ՝եղաւ։ Նա սանձահարեց արկածախնդիր ու շովինիստ տարրերի ախորժակները, ստիպեց կառավարութեանը ի վերջոյ յետ քաշուել ժողովրդասպան պատերազմի դաշտից և այսօր ահա ծանուցւում է իլուր աշխարհի մի մեծ իրողութիւն—ֆրանսա-գերմանական համաձայնութիւնը Մարօկկոյի շուրջը, որ վայրկենաբար փարատեց բաղաղաքիրթ աշխարհի վրայ ծանրացած կօշմարը և գլորեց մի մեծ խոչընդոտ ազգերի հմաերաշխութեան ճանապարհից։ Հանրային կարծիքի ճնշման տակ, երկու կառավարութիւնները փոխադարձ զիջումներով համաձայնութեան եկան. Ֆրանսիան ընդունեց Գերմանիայի իրաւունքը՝ ազատօրէն առաջ մղելու տնտեսական ձեռնարկները Մարօկկոյում, որի դռները բաց հռչակուեցին բոլորի համար, իսկ Գերմանիան ճանաչեց Ֆրանսիայի յատուկ շահերն ու իրաւունքները Ալժիրի սահմանակից երկրի մէջ։ Վառօդի հոտը չքացաւ գէթ այդ հորիզոններից, Մարօկկոյի համար պատերազմ չի լինի... Երկու երկրների սօցիալիստ կուսակցութիւններին է հասնում պատի մեծագոյն բաժինը այդ բախտաւոր իրողութեան մէջ։ Նրանք հասկացրին ամենառնթիւ իրենց կառավարութիւններին, որ միլիոնաւոր պրօլետարիատը բնաւ տրամադիր չէ պատերազմելու, իր նմաններին, իր վիճակակից եղբայրներին կոտորելու, յանուն բուրժուա-կապիտալիստական աստուածների։ Նրանք մերթ ընդ մերթ—Շտուտգարտի համագումարում և անցեալ հոկտեմբերին Բրիւսելի Բիւրօյի նիստերում—սպառնացին, որ պատերազմի դէպքում երկու երկրների բազմամիլիոն սօցիալիստ աշխատաւորները կարող են ոչ միայն չը հետևել իրենց բուրժուա հրամանատարների կոչերին, այլև նոյն իսկ վտանգել կապիտալիստական կարգերի գոյութիւնը... Հակամիլիտա-

րիստական հոսանքը գրաւել է Ֆրանսիայում ամբողջ գաւառներ, նա մղւում է—թէև ոչ այնքան բացարձակ ձևով—նաև Գերմանիայում. ինքը Բեբելը յայտարարեց միանգամ բարձրաձայն, որ Վիլհելմ II-ի կառավարութիւնը չը պէտք է պատերազմի դէպքում մեծ յոյս տածէ գերմանական մի քանի միլիոն սոցիալիստ աշխատաւորութեան վրայ... Այդ բոլոր արտայայտութիւնները չեն մնում, հարկաւ, առանց ազդեցութեան՝ իշխող դասակարգերի վրայ, որոնց շարունակում է ահաբեկել սոցիալական յեղափոխութեան ուրուականը...

Ֆրանս-գերմանական համաձայնութիւնը նախապատրաստելով, նրա համար երկար, անդադրում քարոզ մղելով երկու երկրների սոցիալիստական կուսակցութիւնները այս անգամ ևս կանխեցին մի մեծ ընդհարում, որ—ինչպէս բոլոր նման ընդհարումները—պիտի կատարուէր լոկ իշխող դասակարգերի ցանկութեամբ, նրանց շահերի հակամարտութեամբ, նրանց դաւերով և ի վնաս, ի կործանումն բուն աշխատաւոր ժողովուրդների։

Որքա՜ն նիզակներ էին ջարդել Ժորէսներն ու Բեբելները երկու վաղեմի թշնամիների այդ փոխադարձ մերձեցման համար... Այժմ նրանք հպարտութեամբ կարող են դիտել գործի սկզբնաւորութիւնը, իրենց ճիգերի պսակ-արդիւնքը։ Ֆրանս-գերմանական մերձեցումը յղի է ծանրակշիռ հետևանքներով։ Երկու քաղաքակիրթ ժողովուրդները չը պիտի դեգերէին յաւիտենական ու աղէտաւոր թշնամութեան մէջ. երկուսի շահերն էլ թելադրում են իրարու մօտենալ և խաղաղութեամբ լուծել առկախ ու ահաւոր կնճիռները։ Առաջին քայլին կը յաջորդեն, անտարակոյս, ուրիշները, ժողովուրդը երկուստեք միշտ աւելի կը ծանրանայ կշռի վրայ, կը թելադրէ կառավարութիւններին իր կամքը, երկու ազգերի յարաբերութիւնները հետզհետէ կը մտերմանան և այդ հանգամանքը անդրադառնալով եւրոպական, կարող ենք ասել՝ տիեզերական կացութեան վրայ, հանգցնելով պատերազմների մեծագոյն աղբիւրները, կը նիւթէ վերջապէս այն բաղձալի պայմանը, միջազգային այն յարատև, անվրդով խաղաղութիւնը, ուր կուլտուրան կ'ընթանայ անկաշկանդ առաջադիմութեամբ և ժողովուրդները, ազատուած պարբերաբար իրար յօշոտելու անհրաժեշտութիւնից, աւելի ամուր կը կոփեն համերաշխութեան դաւանանքը, աւելի ընդարձակ թռիչք կը տան սոցիալական ազատագրութեան պայքարին, ուղղելով իրենց բովանդակ ճիգը մարդկութեան գիշատիչների դէմ...

Գերմանիայի քաղաքական էւոլիւցիայի մէջ. իբրև հետաքրքրական ու հաճելի մի նորութիւն, յիշենք և այն մի քանի մասսային, աղմկայոյզ ցոյցերը, որ անցեալ տարւայ ընթացքում կազմակերպուեցին այդ երկրում—սոցիալ-դեմոկրատիայի կողմից — գլխաւորապէս բողոքելու համար պրուսական Լանդտագի ընտրողական արատաւոր սիստէմի դէմ։ Անսովոր բան էր տեսնել, թէ ինչպէս տասնեակ հազարաւոր բանւորներ դրօշակներով ու երգերով գրաւում են հօհէնցօլլերնեան մայրաքաղաքի փողոցները, տեսնել մանաւանդ, թէ ինչպէս սոցիալիստական պրոլետարիատի այդ հեղեղը գրոհ է տալիս դէպի կայսերական ապարանքները, սպառնալով քար ու քանդ անել... Դա յիրաւի մի ուշագրաւ և ուրախալի նորութիւն է. գերմանական սոցիալ-դեմոկրատիան փորձեր է անում թօթափելու իր աւանդական կրաւորականութիւնը և այդ ռազմական փորձերի պատիւը գրեթէ ամբողջապէս պատկանում է Էդուարդ Բերնշտայնին, „ռէվիզիոնիզմի“ համբաւաւոր թէօրիաիկոսին. հռչակուած իբրև մեղմ, չափաւոր, օպպորտիւնիստ՝ նա տուեց այնուամենայնիւ յեղափոխական մասսային ցոյցերի գաղափարը, որ ուրիշ մի քանի երկրներում, մասնաւորապէս Աւստրիայում, ընդհանուր ընտրողական իրաւունքի մեծ պայքարի միջոցին, տուել է փայլուն, բեղմնաւոր հետևանքներ։ Սոցիալ-դեմոկրատիան հրաժարւում էր այդ ընթացքից, սովորաբար պատճառաբանելով, թէ „հրացանազարկ կ'անեն ժողովրդին“... Բերնշտայնի առաջարկով ու ջանքերով էր, որ պրուսական սոցիալիստների համագումարը որոշեց պարբերաբար „գրաւել փողոցը“ և բողոքի թափորներ կազմակերպել, խլելու համար ընդհանուր ու հաւասար ձայնատուութիւն Պրուսսիայում (Լանդտագի ընտրութիւնների մէջ), ջնջելու համար ընտրողական մի սիստէմ, որ ծառայում է սոսկ փողատէր ու առանձնաշնորհեալ դասակարգերին, կուեելու համար առհասարակ բոլոր բացառիկ, հակաժողովրդական սահմանումների դէմ։ „Բացառիկ օրէնքների“ ուրուականը 1908 թուականի ընթացքում նորէն ծայր տուեց Գերմանիայում, սոցիալիստական շարժման դէմ, իշխող դասակարգերը մի քանի անգամ դարձեալ սպառնացին կրկնել 1878-ի դրակոնական ճնշումները, թումբ դնել սոցիալիզմի յարաճուն հոսանքի առջև, բայց դա մնաց և կը մնայ միշտ լոկ սպառնալիք. դիւրին բան չէ բացառիկ օրէնքների ենթարկել ժողովրդի մի ահագին հատուածը, որ ունի երեք ու կէս միլիոն ընտրող սոցիալիստ քաղաքացիներ...

*

Կռիւը բոլոր հնացած կարգերի դէմ, սոցիալիզմի ու ռամկավարութեան կռիւը յանուն նորանոր բարեփոխումների՝ առաջ մղեց նաև ուրիշ երկրների պարլամենտներում—և՝ Անգլիայում, ուր աշխատաւորական կուսակցութիւնը (Labour Party) քւէարկել տուեց ծերունիներին ապահովող մեծ օրէնքը, և Աւստրիայում, ուր նոյն սոցիալիստ կուսակցութիւնը, ի դէմս իր հռչակաւոր պարագլուխ Ադլերի,

միակ բանաւոր ելքը ցոյց տուեց իր երկրի կառավարութեանը, քաղաքական տագնապի միջոցին, պահանջելով մտցնել Բօսնիայի ու Հերցեգօվինայի մէջ սահմանադրութիւն, ռամկավարական մի բէժիմ, ու այդպիսով զինաթափ անել դրսի ատելութիւններն ու պատերազմի վտանգը...

Սօցիալիզմը կուի առաջապահն էր անգամ Ռուսաստանում, նրա Պետական Դումայի մէջ, ուր երբեմն մեծաքանակ, այժմ փոքրաթիւ „ծայր-ձախակողմը“ սահմանադրական ռամկավարականների հետ միացած, յաճախ նրանցից շատ առաջ անցնելով՝ շարունակեց աջակողմեանների ու կենտրօնի վայրենի աղաղակների մէջ մերկացնել երկրի վէրքերը և աշխարհի ուշադրութեանը մատնել ցարիզմի անհատնում ոճիրները։

Ներքին բարենորոգումների տեսակէտից վերջին թւականը նմանեց իր երկու նախորդներին։ Ոչ մի բայլ չ՚արուեց դէպի երկրի իրական խաղաղացումը. 1905-ի հոկտեմբերեան մանիֆեստը շարունակեց մնալ մեռած տառ. ցարը, մեծ իշխանները, մինիստրները ամեն առթիւ զգալ տուին Ռուսաստանի ժողովուրդներին, որ ոչինչ չի փոխուած այդ երկրի դարաւոր կացութեան մէջ, որ նա մնում է միահեծան, ինքնակալ բռնապետութիւն, չը նայած պարլամենտարիզմի այն այլանդակութեան, որ կոչւում է „Երրորդ Դումա“։ Մինիստրներից մէկը թոյլ տուեց իրեն մինչև իսկ հրապարակօրէն, Դումայի ամբիօնից ծաղրել ժողովուրդների անբաւ զոհողութիւններով ձեռք բերուած համեստ նւաճումը... Ամբողջ բռնապետական կամարիլլան ցնծում է իր տարած յաղթանակի գիտակցութեամբ և դահճի ձեռքը անդադար գործում է յեղափոխական երիտասարդութեան դէմ ամբողջ լայնատարած կայսրութեան մէջ։

Արտաքին աշխարհը ևս շարունակեց ժպտալ հիւսիսային բռնակալութեան. ցարիզմը շարունակում է վայելել արևմտեան խոշոր բուրժուազիայի համակրանքը և դրամական առատաձեռն աջակցութիւնը՝ ներքին „խաղաղութիւնը“ ապահովելու, կամ ուրիշ խօսքով յեղափոխական շարժումը բնաջինջ անելու նպատակով... Փոխառութեան բոլոր ձեռնարկները պսակւում են աջողութեամբ, եւրօպական կապիտալիստները եղբայրական ձեռք են մեկնում Պետերբուրգի հարստահարիչներին, սնուցանում ու ամրապնդում են „համաշխարհային Բաստիլը“, թէպէտ և գիտեն, խոստովանում են, որ այդ ճիգերը չեն կարող ունենալ յարատև արդիւնք, որ իրենց հովանաւորեալը մի խարխլուած, ծայրէծայր փտած գոյութիւն է, որի բոլոր անդամներից տարածւում է աշխարհի չորս կողմերը մի անհնարին գարշահոտութիւն...

Ցարիզմի այդ կատարեալ ներխուժութեան ամենամահաւոր փաստերից մէկը այսօր, իբրև պատմական մի անլուր, աննախընթաց հրէշաւորութիւն, ապշանքի ու ցասման մէջ է ձգել ամբողջ մտածող մարդկութիւնը։ „Դրօշակի“ անցեալ համարում մենք յիշեցինք ոստիկան-յեղափոխական Ազեվի դէպքը։ Քանի գնում, նա բարդանում է, նոր-նոր այլանդակ գաղտնիքներ է հրապարակ հանում, որոնցով այսօր լեցուն են Ռուսաստանի ու Արևմուտքի մամուլի էջերը։ Դուրս է գալիս, որ տարիներից ի վեր „գաղտնի“ ամենազօր ոստիկանութիւնը—ստրուկ երկրների այդ անխուսափելի, յաւիտենական անարգանքը—իր մի հմուտ գործակալի միջոցով շարունակ յարաբերութիւններ է պահպանել յեղափոխական մի ուժեղ կուսակցութեան հետ և շնորհիւ այդ կապերի, ոչ միայն սիստեմատիկաբար որսել է, դահճի երախը նետել հազարաւոր անձնուրաց մարտնչողներին, այլ և—մղուած անձնական դժգոհութիւններից, տարուած թայֆայական, կարիերիստական մի զարհուրելի մրցութեամբ—նոյն գաղտնի ոստիկանութիւնը դաւել է շարունակաբար բարձր, պաշտօնական ոստիկանութեան դէմ, կազմակերպել է մի շարք „խոշոր“ մահափորձեր, մասնակցել է մինիստր Սիպիագինի, նահանգապետ Բօգդանովիչի, ամենակարող Պլեվէի, մեծ իշխան Սերգի Ալէքսանդրովիչի, զինուորական դատախազ Պավլովի, կոմս Իգնատիեվի, գեներալ Մինինի սպանութեան փորձերին...

Ահա այդ արտառոց նորութիւնն է, որ հսկայական առեղծուածի պէս, այսօր հրապարակ է նետուել, որպէս զի մի աւելորդ անգամ արտասանէ քաղաքակիրթ ու դեմոկրատ աշխարհի առջև ցարիզմի բարոյական մահավճիռը...

Անհուն կսկիծ է յարուցանում մեր շարքերում Սօցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան այդ անօրինակ ու տագնապալի ձախորդութիւնը։ Լինել երկար տարիների ընթացքում այնքան ցածօրէն դաւաճանուած մի ընկերից, որ վայելել է ամբողջ կուսակցութեան սէրն ու յարգանքը, իմանալ յանկարծ, որ այդ տաղանդաւոր կազմակերպողը, բոլոր ահարկու դաւադրութիւնների այդ ամենազօր ու աներևոյթ ոգին, բոլոր կուսակցական արկածների այդ անբաժան „ընկերը“ մի ստոր, անարգ մատնիչ է, ոստիկանական մի գործակալ, որ մահւան գիրկն է նետել ուրիշ անհամար կտրիճ ու թանկագին ընկերների, կուսակցութեան ու գաղափարի իսկական առաքեալների... Կա՞յ արդեօք աւելի մեծ պատիժ, աւելի դժնդակ մի աղէտ յեղափոխական մի մարմնի ալէծուփ գոյութեան մէջ...

Ցաւով ենք, սակայն, որ այդ սարսափելի յայտնութիւնը կունենայ նաև իր բարերար հետևանքները։ Հռչակաւոր „մարտական կազմակերպութիւնը“, կը վերանորոգւի անտարակոյս. կը վերակազմւի գուցէ նաև սօցիալիստ-յեղափոխականների կենտրօնական մարմինը և նա զտելով իր շարքերը բոլոր կասկածելի տարրերից, իր ծոցն առնելով ըստ առաջնոյն երկրի ամենա-

առնական, ամենակորովի երիտասարդութիւնը՝ նորէն կը նետուի „մեծ, արիւնոտ ձեռնարկների“ ճանապարհը— այս անգամ արդէն իր բովանդակ ուժը ծառայեցնելով ժողովրդական ազատագրութեան վեհ գործին...

***

Տաճկաստանը բախտի բերմամբ կանխեց Ռուսաստանին։ Ասում ենք՝ „բախտի բերմամբ“, որովհետև կուլտուրական առաջադիմութեան տեսակէտից, մտաւոր ու յեղափոխական ուժերի կողմից տարբերութիւնը ահագին է երկու երկրների միջև, վերջինը անհամեմատ բարձր է առաջինից։ Եթէ ճիշտ լինէր ֆրանսիական յայտնի ասացուածքը՝ „*Les peuples ont les gouvernements qu'ils méritent*“ (ժողովուրդները ունենում են իրենց արժանի կառավարութիւններ)—ապա Ռուսաստանը, որի զարգացման ընդհանուր մակարդակը շատ աւելի բարձր է և որի յեղափոխական շարժումը զինուորական հզօր խլրտումների ձևով սկսել է դեռ մօտ 100 տարի սրանից առաջ, պէտք էր Թիւրքիայից շատ առաջ վայելէր սահմանադրական կառավարութիւն։ Այսօր, սակայն, հակառակն ենք տեսնում և մինչդեռ ահագին, հարիւր միլիոնաւոր զանգուածը ֆիննական ժայռերից մինչև Լեհաստանի հովիտներն ու կովկասեան լեռնաշղթան շարունակում է գալարուել աշխարհի մէջ այժմ այլևս եզակի բռնակալութեան ճիրաններում, անդին՝ փոքր Ասիայում, քաղաքակրթութեան դրօշակին դեռ նոր փարող Թիւրք, քիւրդ ու այլ կիսանօմադ, թափառական ժողովուրդներն ունին արդէն սահմանադրական կարգեր և իրենց ուզածին պէս վայր են դլորում անհնազանդ կառավարութիւններին։ Պատկերը— մի կողմից՝ վշտաբեր, անմխիթար, միւս կողմից՝ ոգևորիչ, սրտապնդող...

Թիւրքիայի ժողովուրդները ևս, անշո՞ւշտ, ինչպէս երկրագնդի բոլոր ուրիշ ժողովուրդները, վաղուց արժանի են այդպիսի կարգերի... Ո՞ւր արդեօք աշխատաւոր ընդհանրութիւնը իր դարաւոր տառապանքներով, իր անհուն ու ցաւոտ զոհաբերութիւններով չի արժանացել աւելի լաւ, աւելի մարդավայել մի ճակատագրի... Սակայն, մի կողմից այդ ընդհանրութեան տգիտութիւնը, միւս կողմից իշխող դասակարգերի բազմադարեայ, ժառանգական յաւակնութիւնները, բռնաւորների „աստուածային ծագման“ չարաշուք դաւանանքը, կղերի յօժարակամ ու շահախնդիր կողմնակցութիւնը բռնաւորներին և մի շարք ուրիշ ձախորդ, աղէտաւոր գործոններ՝ ձգտել են ամենուրեք յաւերժացնել կեղեքման ու հարստահարութեան ըէժիմը, բռնադրել են ամենուրեք հալալ, ազնիւ աշխատանքի բազմամիլիոն լեգէոնների անարժան կառավարութիւնների կամքը, քմահաճոյքը... մինչև որ հանգամանքներից նպաստաւորուած պատմա՛կան գիտակից փոքրա՛մասնութիւնը գործօն կերպով հրապարակ է իջել և արիւնոտ կամ անարիւն ըմբոստացումով յետ է խլել ոտնահարուած իրաւունքը, հաստատել է, վերջապէս, գէթ մօտաւոր հաւասարակշռութիւն, գէթ մօտաւոր նմանութիւն՝ կառավարութեան ու ժողովրդի շահերի միջև։

Թիւրքիայում այդ փոքրամասնութիւնը ձուլուել էր նախ քրիստոնեայ փոքրաթիւ, կրկնակի ու եռակի ճնշուած, հալածուած ժողովուրդների մէջ։ Դեռ ընդամենը մէկ տարի սրանից առաջ օսմանեան կայսրութեան սահմաններում, եթէ բաց թողնենք հեռաւոր Եմենը, բուն, գիտակից, կազմակերպուած յեղափոխական տարր ներկայացնում էին միմիայն հայերն ու մակեդոնացիք։ Նրանց անջատ շարժումներն էլ հանդիպում էին մի կողմից դիւանագիտութեան անյաղթելի veto-ին, միւս կողմից իշխող ազգութեան և մանաւանդ նրա „իդէոլոգների“, մտաւորականների դիմադրութեան։ Բայց նոյն այդ „գեավուր“ յեղափոխականների երկարամեայ կուի ու տառապանքի ազդեցութեան տակ, իրերի անխուսափելի բերմամբ, ծայր էր տուել խմորումը՝ նոյն իրեն, մահմեդական ամբոխի ծոցում... Երկու նախորդ թուականների յուզումները — Էրզրում, Կաստեմունի, Թիֆլիս —թէև քաոսային, անկազմակերպ, առանց նպատակի պարզ գիտակցութեան, բայց արդէն ազդարարներ էին մօտալուտ Զարթնումի։ Թիւրք ամբոխը, կարելի է ասել, կանխեց Թիւրք մտաւորականութեան, „Երիտասարդ Թիւրքիային“։ Նա զարկ տուեց այդ վերջինի կազմակերպման։ Նա փոքր ինչ կրակ մտցրեց „իդէոլոգների“ պաղ ու անշարժ խառնուածքի մէջ։ Նրա բարերար ազդեցութեան տակ „Երիտասարդ Թիւրք“ կուսակցութիւնը սթափելով, սկսեց խորհել միջոցներ՝ հրդեհը աւելի և աւելի ծաւալելու, միաժամանակ սկսեց մօտենալ „Դաշնակցութեան“։

Թիւրք ժողովրդի այդ յանկարծական, թէկուզ և կցկտուր, զարթնումը որոշ յոյսեր ներշնչեց և հայ մարտական կուսակցութեան։ Նա պատրաստեց, կարելի է ասել, քրիստոնեայ ու մահմեդական յեղափոխականների համաձայնութիւնը, որ կնքուեց անցեալ պատմական թուականի արշալոյսին, Պարիզում, Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ ու ջանքերով։ Այդ համաձայնութեան անդրադարձումը կացութեան վրայ, նրա բարոյական ազդեցութիւնը անժխտելի է։ Մտքերի խմորումը Թիւրք գիտակից խաւերի մէջ առանձնապէս ուժեղեցաւ Եւրոպայի փոքր ինչ վճռական միջամտութեամբ Մակեդոնիայում, ըէֆորմային նոր ծրագրով,—մի միջամտութիւն, որ շրջահայեաց ու սրատեսաւ տաճիկներին ցոյց էր տալիս պետութեան նոր անդամահատման հեռանկարը...

Եւ կատարուեց բարեբաստիկ „անակնկալը“, որ, սակայն, վաղուց սպասուած տրամաբանական արդիւնքն էր քրիստոնեայ ու մահմեդական լուսագոյն տարրերի եր-

կարատև խաղաղ ու արիւնոտ ճիգերի, կուի ու անօրինակ մարտիրոսութեան։ Կատարուեց նա մի դասակարգի ձեռքով, որ սովորաբար բռնապետութեան նեցուկ է լինում ամենուրեք, որի յամառ, անշարժ ու պողպատեայ զանգուածների տակ ճարճատեց, ընկաւ Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը...

Օսմանեան սահմանադրութիւնը այսօրուայ մեծագոյն իրողութիւնն է, որքան էլ նա լինի թերի, արատաւոր, որքան էլ մասնաւորապէս, հայ ժողովուրդը գանգատուելու տեղիք ունենայ։ Նա ամուր կանգնած է սուլթանական բռնակալութեան փլատակների վրայ և թուում է թէ ոչ մի „պետական հարուած“ չի կարող այլևս սասանեցնել նրան։ Վերջին դէպքերով — որոնց ճշգրիտ գնահատութիւնը վերապահուած է ապագային — օսմանեան պարլամենտարիզմը յամենայն դէպս տուեց իր ուժի ու կենսունակութեան առաջին խրոխտ ապացոյցը։ Ժողովրդական ներկայացուցչութիւնը մի համարձակ ժեստով ճանապարհ դրեց Քեամիլ փաշային և հրաւիրեց նոր մեծ վիզիր, որ հանդիսաւոր խոստում տուեց՝ ամեն պարագայում համակերպել պարլամենտի գերագոյն կամքին։ Նոր մեծ վեզիրը, Հիլմի փաշան, հրապարակ եկաւ, իբրև „Միութեան ու Առաջադիմութեան“ կոմիտէի թեկնածու և իբրև առաջին զուտ սահմանադրական մինիստր-նախագահ։ Մօտիկ ապագան ցոյց կը տայ, թէ „Մ. և Յ.“ կոմիտէի այդ նոր փայլուն յաղթանակը մինչև ո՞ր աստիճան կը լինի յաղթանակ իսկական պարլամենտարիզմի և գրաւական՝ ժողովուրդների բարգաւաճման...

***

Հայոց կեա՞նքը... Տասնեւութ տարի շարունակ, իւրաքանչիւր տարուայ տեսութեան մէջ, այս թերթի էջերում, տխուր ու տաղտկալի միակերպութեամբ արձանագրում էինք այդ կեանքի սարսափները միայն։ Սարսափը, յիրաւի, միակ էական ստորոգելին էր այդ անօրինակ գոյութեան՝ որ իր օրհասական ու աղեխարշ գալարումներով ապշեցրել էր քաղաքակիրթ մարդկութիւնը և առաջնակարգ, գրեթէ եզակի տեղ է գրաւել համաշխարհային մարտիրոսագրութեան մէջ։

Այսօր առաջին անգամը տարեմուտի մեր յօդուածի մէջ խզում ենք անցքերի ու խոհերի եղերական շարքը և եթէ երբէք, անդամ ամենամռայլ դրագներում, մենք անձնատուր չենք եղել մեղկ, սպանիչ յոռետեսութեան, եթէ միշտ անվհատ ու յուսավառ քայլել ենք արհաւիրքների միջից դէպի գալոց, անխուսափելի արշալոյսները—ապա այսօր աւելի ևս տոգորուած ենք ջինջ, լաւատես վստահութեամբ դէպի ապագան։ Ցոյսի հզօր ճառագայթները սփռուում են մեր նահատակ երկրի վրայ, թէև այնտեղ դեռ շարունակւում են հարստահարութիւնն ու անիրաւութիւնը։ Դժոխքն անցա՞նք, թէև տակաւին շատ հեռու ենք դրախտի, նոյնիսկ ժամանակակից բուրժուական „դրախտի“, երանութիւններից։

Ի՜նչ սոսկալի պատկեր էին ներկայացնում հայկական գաւառները սահմանադրութեան նախօրեակին... Վասպուրականը մասնաւորապէս, բռնւել էր մի խենթ ու անողորմ հալածանքով։ Դաւաճան դաւթի մատնութեամբ բացւել էին Հ. Յ. Դաշնակցութեան զէնքի խոշոր պահեստները, և Եըլդըզի հրահանգով ու արիւնարբու մի վալիի ղեկավարութեամբ՝ զօրքն ու ոստիկանութիւնը, մորեխի պէս սփռուած ամբողջ գաւառը՝ խուզարկում էին, թալանում, ծեծում, բըռնաբարում։ Ստեղծւել էր մի անհնարին կացութիւն, որի հանդէպ անհրաժեշտ էր ի գործ դնել բոլոր հնարաւոր միջոցները... Դիմումներ եղան Պարիզ ու Լօնդօն. անգլիական պարլամենտի մի քանի անդամներ հարցապնդեցին Վասպուրականի սարսափների առթիւ, մամուլը նորէն խօսեց երկու երկրներում և հանրային կարծիքի ճնշման տակ երկու կառավարութիւնները որոշ քայլեր արին, դրութիւնը փոքր ինչ մեղմացաւ. սակայն — ընդ երկա՞ր...

Օսմանեան յեղափոխութիւնը պայթեց այդ ժամանակամիջոցում. նա եկաւ տակն ու վրայ անելու և միջազգային մի շարք յարաբերութիւններ։ Նա յայտարարեց ի միջի այլոց, որ Բերլինի դաշնագրի 61-րդ, 23-րդ յօդուածները այլ ևս կորցնում են իրենց գոյութեան իրաւունքը, որ հայկական, մակեդոնական խնդիրները, վերցւելով միջազգային դիւանագիտութեան սեղանից, դառնում են օսմանեան պետականութեան ներքին խնդիրներ, կապւում են Տաճկաստանի ընդհանուր ու հիմնական վերանորոգման հետ...

Հայ ժողովուրդը և Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը սպասում են յեղափոխութեան այդ հանդիսաւոր յանձնառութիւնների իրագործման։ Հայ տարրը օսմանեան կայսրութեան շրջանակներում կարող է իրօք ու ամբողջանօրէն բարգաւաճել միայն այն պայմանով՝ որ նրա ազատութիւնը կցորդւի բոլոր շրջապատող ժողովուրդների, ամբողջ Թիւրքիայի ազատութեան ու նորմալ, բնականոն առաջադիմութեան։

***

Կապանքները խորտակւեցին և ազգը կոչւեց կուլտուրական շինարար աշխատանքի։ Հսկայական բանը բացւեց և նրա մռայլ խորշերից դուրս վազեցին հարիւրաւոր կենդանի մեռելները. թանկագին, անգնահատելի ընկերներ՝ որոնց ընդմիշտ կորած էինք համարում, յաւիտեան թաղած սուլթանական զնդաններում, մէկէնիմէկ յարութիւն առան և այսօր նրանցից մի քանիսը բազմած են արդէն համաօսմանեան պարլամենտում, ուր իրենց կեանքով ու գաղափարներով,

իրենց մղած պայքարով ու հերոսական նահատակութեամբ՝ ներկայացնում են բուն, մարմնացած, ռամկավարական ազնուութիւնը։

Ողջո՜ւն նրանց։ Հայ ժողովուրդը երկար տարիների իր լքման ու յուսահատութեան մէջ մի անգնահատելի գանձ է ունեցել — իր գաղափարական երիտասարդութիւնը, որ երբէք չի լքել նրան, որ միշտ բաժանել է նրա տառապանքը, սիրտ է տուել նրան՝ ծանր օրերում։ Այսօր դարձեալ նոյն անձնուրաց երիտասարդութիւնն է հրապարակի վրայ, հայրենիքի փլատակների մէջ, գեղջկական մութ ու ծխոտ խրճիթներում, տենդային ու բեղմնաւոր աշխատանքի շուրջը. նա է — որբ ու աւեր հայրենիքի միակ զարդը, ազգի լաւագոյն յոյսերի մարմնացումը...

Իսկ ո՞ւր է „ԱԶԳԸ“... Ո՞ւր են այն տարրերը, որոնք ունին միշտ իրենց զազրելի շրթունքների վրայ „ազգ“, „հայրենիք“ բառերը, որոնք սակայն պատրաստ են միշտ լքել ժողովրդին՝ նրա գոյութեան պայքարի ամենավճռական դրուագներում։ Ո՞ւր է ներկայ հանդիսաւոր ու տագնապալի վայրկեաններում մեր դրամատէր դասակարգը, մեր թիւրքահայ ու ռուսահայ կրեսոսները, հարիւր միլիոնների վրայ իշխող, պերճանքի մէջ լողացող մեր ազգային բուրժուազիան։ Մի՞թէ նրա ներկայացուցիչները ընդունակ չեն մի աւելի ազնիւ գործի, մի աւելի պատուաւոր առաքելութեան, քան սուլթանին սեղանակցելը, արեան օրգիաներ վայելելը... Մինչև օրս նա վատաբար փախուստ էր տալիս պայքարող երիտասարդութիւնից, մերժում էր նրան իր համակրանքն ու օգնութիւնը, պատրուակելով „պայմանները“, երկիւղը, անվստահութիւնը դէպի գործիչները։ Այսօր սակայն վերացել են այդ պայմանները, սահմանադրութիւն է ցաճկաստանում, դուռը բացուել է հայրենիքի, վերականգնել է և ազգային սահմանադրութիւնը, ժողովրդական պատրիարքը վերահաստատուել է իր պաշտօնի մէջ։ Եօթ ամսից ի վեր ժողովուրդը սպասում է. ահռելի բացեր կան լրացնելու, վերաշինութեան, ազգային քաղաքակրթութեան վիթխարի աշխատանք կայ կատարելու արեան ու արցունքի հովիտներում, և որ ամենից ահաւորն է — սովը հնձում է Հայաստանի մանուկ սերունդը... Կա՞յ արդեօք ազգերի կեանքում աւելի հանդիսաւոր մի վայրկեան, աւելի հրապուրիչ ու հրամայական մի առիթ՝ հոսեցնելու հարստութեան աղբիւրները, վեհանձնութեան թռիչքներով ամոքելու թշուառութիւնը, ապրեցնելու կիսանահատակ, հաշմանդամ, միլիոնաւոր հարազատներին։

Բայց վեհանձնութեան այդ թափերը չեն տրուած հայկական բուրժուազիային։ Այսօր նա նոյնն է, ինչ որ երէկ էր — հայ մարանչող բանակի գերմարդկային պայքարի ու չարչարանքի օրերում։ Նա դարձեալ թագնուում է, դարձեալ վատօրէն կծկուում իր ամրակուռ անգուկների շուրջը, երբեմն-երբեմն շպրտելով ողորմելի գրօշներ՝ ի պատասխան աղիողորմ կոչերի...

Եւ 1908 թուականը միանգամ ևս, աւելի ուժգին քան երբևիցէ, շեշտեց տխուր, ճակատագրական փաստը — հայ աշխատաւոր ժողովրդի սրտաճմլիկ մենակութիւնը։ Մի անգամ ևս այդ ժողովուրդն զգաց, որ իր ու „ազգի“ կուշտ, շահամոլ կաստայի միջև անդունդ է ձգուած և որ նա ինքը պիտի հոգայ իր ծով ցաւերը, պիտի հարթէ իր ճանապարհը անհնարին խոչընդոտների վրայից, յենուած իր սեփական ուժերի վրայ, իր գաղափարական տարրերի անձնազոհ գործակցութեան վրայ։

ԹԻՒՐՔԻԱ

ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրքիոյ ներկայ բարենորոգչական շրջանին մէջ, երբ կը մտածուի երկրի վարչութիւնը դնել քաղաքակիրթ երկիրներուն վայել հիմքերու վրայ, ամենէն աւելի ուշադրութեան առնելու է այն միջոցները, որ կը բարելաւեն ազգաբնակութեան տնտեսական վիճակը։

Նիւթական կարողութիւնն ու բարձրութիւնը հիմք է ամեն բանի. անկէ է որ խոշոր չափով կախուած է երկրի լուսաւորութիւնը, արհեստներու ու առևտուրի զարգացումը, պետութեան ուժն ու հմայքը։

Բաւական է յիշել, որ ամենահարուստ Անգլիան, Ամերիկան ու Ֆրանսան միաժամանակ և ամենաքաղաքակրթուածներն են մեծ պետութիւնների շարքում և ընդհակառակը Ռուսիան և Օսմ. երկիրը կը բռնեն վերջին տեղը, թէ հարստութեան, թէ լուսաւորութեան տեսակէտով։ Սակայն աւելի դիւրին է ընդունիլ այս ճշմարտութիւնը, քան թէ որոշել այն միջոցները, որոնցմով ամենադիւրին կերպով կարելի է հասնիլ վերը յիշուած նպատակին։ Ազգաբնակութեան բարեկեցութիւնը ապահովող ճանապարհները, անշուշտ, շատ և բազմապիսի են։

Ապահովութեան, կարգ ու կանոնի հաստատումը, խղճի, խօսքի, ժողովներու ազատութիւնները և ժողովրդապետութիւնը ապահովող օրէնքներու մշակումը, դատարաններու արդարացի, արագ և ձրի կերպով գործելը, հարկերու տանելի ըլլալն ու արդարացի դասաւորումը, ձեռնհաս ու ազնիւ պաշտօնեաներ ունենալը, ասոնք բոլորը կարևոր են, իրականալու են և կ'ազդեն, հարկաւ, մեր կեանքի բարելաւման վրայ։ Սակայն, այս բոլոր օրէնքներու ու փոփոխութիւններու ազդեցութիւնը մեծ չափով կապ ունի գործադրող մարդոց կամքէն ու կարողութենէն։ Եւ քանի որ մարդոց կարողութիւնը, ինչպէս և սովորութիւնները չեն կարող հիմնական փոփոխութեան ենթարկուիլ միանգամէն — մէկ թերևս տասը տարիներու ընթացքին մէջ — օրէնքներու բարերար ազդեցութիւնը իրենց ամբողջութեան մէջ կ'արտայայտուի երկար տարիներէ յետոյ։ Ահա թէ ինչու, ցանկալի օրէնքներ մշակելու հետ միասին

երկրի իսկական վերածնութեան համար գործադրելու է այնպիսի միջոցներ, որոնք, անկախօրէն անհատներու կամքէն, դրական և լաւ արդիւնք տան միշտ, նոյնիսկ շար մարդոց ձեռքին մէջ։ Այդպիսի օգտակար, արդիւնաւէտ, միմիայն բարին արտադրող միջոցների շարքին մէջ են ճանապարհները և մանաւանդ երկաթուղիները։

Մէկ կողմ թողունք Եւրոպան, ուր երկաթուղիներու երկարութիւնով ու շոգենաւերու մեծութիւնով կը չափի ամեն մէկ պետութեան ուժը և յառաջդիմութիւնը։ Նոյնիսկ Թիւրքիոյ մէջ փորձերը ցոյց կուտան, թէ ի՞նչ հսկայական ազդեցութիւն ունին անոնք երկրի յառաջադիմութեան վրայ։

Ռումէլիի, Պրուսայի, Այտընի և Պէյրութի վիլայէթները որ օժտուած են երկաթուղիներով, վերջին տարիների ընթացքին մէջ ըրած են շատ խոշոր քայլեր դէպի առաջ։ Կանգնելով յառաջդիմութեան ուղիի վրայ, անոնք ամեն տեսակէտով անհամեմատ աւելի բարձր են Անատոլիի շրջաններէն։ Անոնք ունին ոչ միայն „երկաթէ գծի“ ներկայացուցած ամեն տեսակի դիւրութիւններ, այլ և մեծ չափերով կ'օգտուին տնտեսապէս։ Բաւական է յիշել, որ քէօթահիայի, Էրթօղրուլի, Իզմիդի և Էնկիւրիի սանճակներու արմտիքներու տասանորդը (աշար) տասը տարուայ ընթացքին մէջ (1889—90-էն մինչև 99—1900) կրկնապատկեր է՝ 130 հազար ոսկիէ բարձրանալով 250 հազարի։

Ըսել է որ իւրաքանչիւր տարի ազգաբնակութիւնը կ'աւելցնէ իր ստացած եկամուտներն ու հարստութիւնը 5—7 %-ով։ Նոյնը տեղի ունի Սիւրիա և Մակեդոնիա, բոլոր այն վայրերուն մէջ, ուր երկաթուղիներու միջոցով ժողովրդին հնարաւորութիւն կը տրուի արտահանել մթերքները երկրի խորերէն և այդպիսով աւելցնել մշակուող հողերը կամ վերջինս մշակել աւելի մեծ խնամքով։

Հայկական շրջանները զուրկ են այս բոլոր առաւելութիւններէն։ Հաղորդակցութեան միջոցները այստեղ կը գտնուին նախապատմական վիճակի մէջ։ Տրապիզոնէն Կարին և Սամսոնէն Տիգրանակերտ տանող „կանոնաւոր“ անուանեալ „խճուղիներն“ իսկ տարուայ մեծ մասը անգործածելի են կառքերի համար։ Երկրի ամբողջ տարածութեան վրայ հարկադրուած կը պահպանուի նահապետական ջորեպանութիւնը։ Մէկ ձին ներկայիս մէջ 400—500 օխա ապրանք սայլով փոխադրելու տեղ, մէջքի վրայ բեռով նոյն վճարով կը տանի միայն 100 օխա. ճամբորդը 100 քիլօմետր տարածութիւնը մէկ օրուայ տեղ կը կատարէ 3 օրուայ ընթացքին մէջ։ Առատ տարիները երկրի խորքերուն մէջ պտուղները արժէքէ կ'իյնան, կը փտին, ցորենը կ'ոչնչոտի հորերուն մէջ և ընդհակառակը բնութեան ամենափոքր պատահարը կը բարձրացնէ գները, առաջ կը բերէ սով և մահ։

Շնորհիւ այս տխուր կացութեան երկրագործութիւնը, արհեստները, առևտուրը—հետևապէս և ամբողջ կեանքը—չի զարգանար երկրի այդ մասերուն մէջ. ժողովուրդը հեռու կը մնայ եւրոպական քաղաքակրթութենէն։ Սահմանադրական ռէժիմի առաջին քայլը պէտք է լինի արևելեան վիլայէթներուն յատկացնել այն դիւրութիւնները, որ ունին արդէն երկրի միւս նահանգները։

Թիւրքիոյ վիլայէթներէն շատերը կապուած են այսօր պետութեան միւս կեդրոններու հետ երկաթուղիներով։ Միւսները—ինչպէս Քաստէմունին, Մուսուլը կամ Պաղտատը—ծովերու ու գետերու շնորհիւ հաղորդակցութեան ոչ պակաս յարմարութիւններ կը վայելեն շոգենաւերու միջոցով։

Ջրային հաղորդակցութենէ և երկաթուղիներէ զուրկ կը մնան հայերով ու քրդերով բնակած վայրերը—Սվազ, Խարբերդ, Տիգրանակերտ, Բիթլիս, Վան, Էրզրում։ Այդ շրջաններու երկաթուղիով միացնելը Տրապիզոնի ու ծովի հետ կը բղխի երկրի կենսական պէտքերէն. սա պահանջ է արդարութեան և անհրաժեշտ օսմանեան կայսրութեան բարձրագոյն շահերու տեսակէտով։

Նոյնիսկ երկաթուղիներու դերը ամենէն աւելի կարևոր է ծովէն հեռու գտնուած երկիրներու համար։ Ծովային շրջաններու մէջ ջուրը ինքը (գետ կամ ծով) կը ներկայացնէ՞ մի այնպիսի յարմար և աժան հաղորդակցութեան միջոց, որու հետ չէ կարող մրցիլ ոչ մի երկաթուղի։

Բաւական է յիշել, որ միևնոյն քանակի ապրանքը նոյն արժէքով՝ եթէ ծովով կարելի է փոխադրել 1000 քիլօմետր հեռու, երկաթուղիով հազիւ կարելի լինի միայն փոխադրել 100 քիլօմետր... Այդ է պատճառը որ ցամաքային Գերմանիան և Պելճիկան Անգլիայէն ու Հոլանդայէն համեմատաբար աւելի երկար երկաթուղային ցանց ունին։ Ցամաքային Միացեալ-Նահանգները, նոյնիսկ Ռուսիան արագօրէն կը ծածկուին երկաթուղիներով։ Թիւրքիոյ մէջ ևս ակներև է, որ ծովէն ոչ հեռու անցնող գծերը—ինչպէս են Տէտէ-աղաճի, Պոլսէն Սելանիկ տանող, Գոնիայէն Էրէգլի—վնաս կը բերեն և դեռ երկար ժամանակ այդ վնասով կը ծանրանան կառավարութեան անդուկի վրայ։ Նոյնը՝ հաւանօրէն վերապահուած է և ծովէն ոչ հեռու անցնող Հիճազի գծին...

Հաւանաբար այդ բոլոր ծովէն ոչ հեռու անցնող գծերը երբէք չեն խաղար այն տնտեսական դերը երկրի համար, չեն տար այն շահը, որ ապահովուած է ցամաքի խորքերը տանող „արևելեան“, „Անատոլիի“ կամ „Այտընի“ գծերուն։

Հայաբնակ շրջաններու ներսերը անցնելիք գիծը արտահանութեան ու շահի տեսակէտով կը ներկայացնէ հաւանօրէն ատոր հակապատկերը։ Ցորենի, պտուղներու, բամբակի և այլ բնական հարստութիւններով օժտուած այդ շրջանը այսօր ալ ամենակարևորներից մէկն է Թիւրքիոյ մէջ։ Նա ունի աշխատասէր, համեմատաբար խիստ հողագործ ու այգեգործ ազգաբնակութիւն, որ նոր, աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կը կրկնապատկէ իր եռանդը։

Հանքային հարստութիւնները այստեղ բազմապիսի են և անսահման։ Անցեալին մէջ այդ հանքերը կեանք են տուած հզօր կայսրութիւններու։ Այսօր անոնք կորած են և միմիայն երկաթուղու սուլոցը կրնայ զանոնք արթնցնել դարևոր քնից։

Եթէ Գոնիայի, Տօրոսի և ապագայում Հիճազի ու Միջագետքի ամայի շրջաններով անցնող երկաթուղիները տարին մի քանի հարիւր հազար ոսկի վնաս կը բերեն կառավարութեան, վստահ ենք թէ դէպի Եփրատի

շրջանները տանող գիծը կը ներկայացնէ բոլորովին այլ պատկեր։ Օժտուած լինելով հաղորդակցութեան միջոցներով, կասկած չկայ, որ ազատութեան ու հաւասարութեան բէժիմի տակ ամեն մէկ 10—15 տարին կը կրկնապատկէ թէ իր եկամուտը, թէ պետութեան ուած օժանդակութիւնը։

Բացի այդ, օտար երկաթուղային ընկերութիւններու կրած վնասը ապահովելու համար, օսմանեան պետութիւնը մինչև օրս garantie-ներու (երաշխաւորութիւն) կամ այլ ձևերով, վճարած է օտարներուն 12 միլիոն ոսկի գումար, որ բարդ տոկոսներով ժողովրդին վրայ ծանրացած է կրկնակի բեռով։ Վերջին տարիները garantie-ի ծախքը բարձրացած է տարին 830,000 ոսկիի։

Այդ ընդհանուր և տարեկան տուրքի մէջ հաւասար չափով մաս ունին երկրի բոլոր բնակիչները, հետևապէս և հայկական շրջանները։ Միջին հաշուով ամեն մէկ ընտանիք երկաթուղիներու համար իր գրպանէն մինչև օրս վճարած է 3 ոսկի և տարին կուտայ մինչև մէկ մէճիտիէ։ Տոկոսներու հետ միասին դա կը կազմէ ամեն մէկ ընտանիքի վրայ 5—6 ոսկի, իսկ ամբողջ մեր 4 միլիոն բնակիչ ունեցող շրջանի համար $3^1/_2$—4 միլ. ոսկի գումար։ Եւ այդ գումարները հայկական շրջանների ազգաբնակութիւնը վճարած է իր աղքատ գրպաններէ, կտրելով կերած չոր հացէն, որպէսզի այլ աւելի հարուստ շրջաններ օգտուին երկաթուղու ներկայացուցած բարիքներէն...

Արդ, եթէ ընդհանուր պէտքերի համար հոգ տանող կառավարութիւնը անցեալին մէջ պէտք դատած է պետութեան գանձարանէն (այսինքն ընդհանրութեան գրպանէն) մեծ ծախքեր ընել ծովի ափին գտնուող կամ ծովին աւելի մօտիկ, աւելի քաղաքակիրթ ու աւելի բարեկեցիկ շրջանների համար, միթէ նոյն պարտականութիւնը չպիտի զգայ ան դէպի մի շրջան, որ ամենայետամնացն է այսօր երկրի մէջ, ամենաանկիրթ ուժեր պարունակողը, բայց և ամենէն մեծ ապագայ խոստացողը։ Ամեն մի անաչառ անձ կրնայ այդ հարցին տալ միայն դրական պատասխան։

Վերջապէս հայ, քիւրդ, թիւրք ազգերով բնակած այդ շրջանը 20 տարիէ ի վեր ենթակայ է արտակարգ ճնշող բէժիմի, հալածանքի, եղբայրասպան ընդհարումներու։ Մէկ ամբողջ սերունդի ընթացքին մէջ այդ երկիրը վայրենացեր է, երկրագործը զրկուեր է հողէ, եզէ, գործիքներէ. հերկուող հողերը մնացեր են խոպան, հողագործութեան տեղ բռնել է խաշնարածութիւնը։ Առաջ ընթանալու տեղ մենք դէպի ետ ենք գնացած... Սովը այսօր կայնած է հարիւր հազարաւոր մարդոց դռան առաջ։ Եւ քանի որ այդ սովը հետևանք չէ երաշտի, մորեխի կամ կարկտի, այլ ամայացման, տնտեսական քայքայման ամբողջ մի սիստեմի — սովը կը շարունակի տարիներ։ Հացի գներու բարձրացումը, մարդոց հարիւրներով ուժասպառիլը կը շարունակի մինչև որ երկրի տնտեսական կացութեան մէջ չը մտցուի հիմնական փոփոխութիւն։

Եւ վարչական բարեփոխութեան և հարկերի թեթևացման հետ միասին ի՞նչ կրնայ աւելի լուրջ և աւելի հիմնական լինել քան երկաթուղիներու կառուցումը։ Վերջինս է որ ուժգին զարկ կուտայ երկրի տնտեսական վերաշինութեան, երկաթուղիի նման հսկայական մեծ աշխատանքներն են միայն որ գործ և հաց կուտան տասնեակ հազար անգործ ու սոված ձեռքերուն։

Այս ամենուն աւելցնելու է նաև այն պարագան, որ մեր յիշած հեռաւոր հայկական շրջանը ամենէն անպաշտպանն է պետութեան ապահովութեան տեսակէտէ։ Պատերազմի դէպքում եթէ ծովի վրայով հաղորդակցութիւնը դադրի, Կովկասի ու հարաւային Ռուսիայի կառավարութիւնը շնորհիւ Կարսի գծին, երկու շաբաթուայ մէջ կրնայ 2 բանակ զօրք իջեցնել Էրզրումի սահմանը, այն ինչ Էնկիւրիի ու Մուսուլի վրայով առաջ խաղացող օսմանեան զօրքերը հազիւ 2—3 ամիսներու ընթացքին մէջ կը հասնին Էրզրում։ Ակներև է որ երկաթուղին միայն կարող է ամրապնդել օսմանեան պետութեան միութիւնը և պաշտպանութիւնը. կասկած չկայ, անշուշտ, որ երկաթուղի կառուցանելու հարցը դէպի Եփրատեան շրջանը համարելու է էն կարևորը և էն հասունցածը մեր առաջ դրուած բոլոր գործնական բնոյթ ունեցող հարցերէն։

Շենք կարող այստեղ զանց ընել այն բացառիկ վնասակար ուղղութիւնը, որ ստեղծուած է Թիւրքիայի մէջ garantie-ներու առաւելեալ սիստէմով, երկաթուղային ընկերութիւններու շահի ապահովութեամբ պետութեան կողմէ։ Ապահովուած որ իրենց ծախսուած գումարը տալու է որոշ տոկոս, ամեն պարագայի մէջ երկաթուղիներու ընկերութիւնները հոգ չեն տանիր գծերու յարմարութիւններու, փոխադրութեան աժանութեան, եկամուտներու աւելցնելու մասին։ Միւս կողմէ պետութիւնը ի հատուցումն „ընկերութիւններու“ կրած վնասներու կը վճարէ տարին 7 — 800,000 ոսկի։ Բայց արդեօք այդչափ անպա՞ստ տնտեսական պայմաններու մէջ կը գտնուին երկաթուղիները, արդեօք անհրաժե՞շտ է որպէսզի երկաթուղիներու կառուցումը յանձնուի օտարներու։ Երաշխաւորութիւն չ՚ունեցող Այտընի գծի յաջողակ գործունէութիւնը և Հիճազի ձեռնարկի վերջացնելը պետութեան հոգատարութեամբ կը թելադրէ մեզ յուսալ, որ ապագայում կառուցուելիք երկաթուղային գծերը ևս կարող և պէտք են յատուկ պարտքով չը ծանրանալ պետութեան գանձարանի վրայ։

Առաջին տարիներուն սպասելիք բնական պակասը garantie-ի տեղ կարելի է լրացնել այլ ճանապարհներով.

ա) Աւելցնել մաքսը նոյն շրջաններում գտնուած նաւահանգիստներու մէջ։

բ) Կառուցանող ընկերութիւններուն որոշ պայմաններով տալ նաև շրջանին մէջ գտնուած հանքերու մշակութիւնը։

գ) Գերմանիայի նման յատուկ տուրք նշանակել այն հողերու վրայ, որոնք գտնելով երկաթուղու գծի մօտ անհամեմատ աւելի մեծ չափով կ՚օգտուին անոր բարիքներէն։

դ) Ի դէպ. Հայաստանի խորքերը գացող գծերի նկատմամբ աւելացնել նաև այն պարագան, որ այդ երկիրը ամենայն իրաւամբ իրաւունք ունի պահանջելու վերադարձնել Եփրատեան շրջանին այն $3^1/_2$—4 միլ. ոսկին, որ այդ երկրի ազգաբնակութիւնը անցեալին մէջ

վճարած է միւս շրջաններուն երկաթուղիները ապահովելու համար։

Հարցի ամենադժուար կողմը, ֆինանսականը, կարելի է այսպիսով ապահոված համարել։ Ընացածը դիւրին է և մասնագէտներու գործ։ Հայաստանի խորքերը տանող երկաթուղին կը լինի սովորական լայն ուղիով, թէև լեռնային երկիրներուն աւելի նպատակայարմար է նեղ գիծ. կ'ունենա՞յ նա համեմատական սովորական տարի՞ֆ, թէ՞ Հունգարիայի, Ռուսիայի ու Գերմանիայի նման հողագործական երկիրներուն աւելի յարմար դիֆերենսիալ (երբ վճարը կ'իջնէ հեռաւորութեան համեմատ). պէտք կը համարուի՞ արդեօք մէկ կամ մի քանի գծեր, Սամսունէն, Տրապիզոնէն թէ մի այլ տեղէ սկսող — ատոնք բոլորը երկրորդական հարցեր են։ Կարևորը սա է որ դէպի Եփրատի ակունքները տանող երկաթուղիներու կառուցման հարցը համարելու է հերթական և անյետաձգելի։

Ատոր մասին խորհելու է թէ կառավարութիւնը, թէ պարլամենտը, թէ մանաւանդ ինքը ժողովուրդը, գտնելով, որ շոգեմեքենայի ամեն մի սուլոց հաւասար է ազատութեան ու արդարութեան մասին արտասանուող գեղեցիկ ճառի, որ երկաթէ գծի ամեն մէկ քիլոմետրը արժէ մի դպրոց, դպրոց որ կը ծառայէ հասարակութեան բոլոր խաւերուն առանց լեզուի, կրօնի, դասի, սեռի և հասակի խտրութեան։

Գիտակցելով, որ ծովէն հասնող ամեն մի լեցուած գնացք համահաւասար է ժողովրդի եկամուտի ու հարստութեան աւելնալուն հազարաւոր ոսկիներով։

Որ Եփրատի գիծը կ'ապահովէ Թիւրքիոյ ամբողջութիւնը, կ'ամրապնդէ միութիւնը և ապահովութիւնը։

Վերջապէս, համոզուած լինելով, որ յայտարարուած ճշմարտութիւնները մեր երկրում կեանքի մէջ կ'իրականան ամենէն աւելի երկաթի գծի միջամտութեամբ, երկաթի, որ արիւն հոսեցնելու տեղ կը վերացնէ նախապաշարումները, կ'եռացնէ աշխատանք և կեանք։

Գիտնալով այս ամենը՝ ջանալու է բոլոր միջոցներով առաջ մղել երկաթուղիներու կառուցման հարցը դէպի հայկական շրջանները։

Թող ժողովուրդը պահանջներ դնէ այդ մասին իր ժողովներու ու դիմումներուն մէջ։

Թող պատգամաւորները լուրջ կերպով զբաղուին այդ հարցով և իրենց ձայնը բարձրացնեն այդ կենսական ձեռնարկի համար։

Թող սահմանադրական կառավարութիւնը գտնուի իր պարտաճանաչութեան վրայ և տայ հայկական նահանգներուն այն, ինչ որ վերջինիս պէտքը և իրաւունքն է։

ՊՕԶՈՒՔԻ ՀԱՅԳԻՒՂԵՐԸ

Պօզուք Կեսարիոյ և Եօզղատի միջև 15 ժամ լայն և 20 ժամ երկայն տարածութեան մը վրայ կը գտնուի և կը պարունակէ, ի միջի այլոց, մօտ 40 հայ և հայ-թրքախառն գիւղեր։

Թրքախառն գիւղերու հայերը ինկած վիճակ ունին և մայրենի լեզուին գրեթէ կորնցուցած են։ Թիւրքերը աւելի հարուստ, և մանաւանդ բռնապետական ռէժիմին օրով իրենց ձեռք բերած ազդեցութեան շնորհիւ, կը տիրապետեն հայերուն։ Լեռնային տեղերու հայ գիւղերը միայն համեմատաբար ինքնութիւնին պահած են։

Կրթութիւնը և ուսումը հոգագործ ժողովրդի մտքին մէջ քիչ տեղ գրաւած է։ Ցարեկան հողիս վեց ամիս միայն աշակերտները դպրոց կը յաճախեն, դաշտային աշխատանքները սկսելուն ամենքն ալ կը ցրուին և գիտցածնին ալ կը մոռնան։

Դպրոցները կարգ կանոն չունին, ամեն աշակերտ խառնիխուռն ինչ գիրք որ գտնէ հօրենական տունը՝ իրը դասագիրք կը գործածէ, այնպէս որ, եթէ կարելի է այսպէս ըսել, գրքերու այլազանութեան պատճառով ամենամէկ աշակերտ „դասարան" մը կը ներկայացնէ։ Ամենայոռի սովորութիւն մըն է նաև ամեն տարի դասատու փոխելը։

Իդեական սեռի դաստիարակութիւն բնաւ չկայ և կիները մարդոց հաւասար լծուած են ամեն տեսակ չարքաշ աշխատանքի։

Գիւղացին բազմանալու ընդունակ է։ 18—24 տարեկան կ'ամուսնանան. ամուրիներ հազուագիւտ են, և եթէ կան, ասոր ալ պատճառը „պաշտրդի" յոռի սովորութիւնն է, և կան մարդիկ որ իսկապէս անկարող են 2—7 ոսկին վճարել։

50—60 տարիէ ի վեր շատ մը գիւղեր քառապատկուած են. հին ծերունիները կը կազմեն կենդանի տօմարները։ Գիւղացու այսօրինակ բազմանալովը վարելահողերը կ'անբաւականան, ուստի շատ ընտանիքներ, ապրելու համար, 6—7 եշ կը պահեն և կը շահագործեն փոխադրութիւններ ընելով Զիլէ, Ամասիա, Մարուան, Սամսուն և մինչև Մերսին։

Արհեստները, ինչպէս երկաթագործութիւն, հիւսնութիւն, կօշկակարութիւն, կիներու կիսկատար ոստայնանկութիւն, նախնական վիճակին մէջ են և մարդիկ իրենց հասարակ պէտքերէն աւելի բաներու չեն ձգտիր։

Ցեղին վրայ առիչգոյէ աշխատանքի, շատ երիտասարդներ հեռու տեղեր կերթան խճուղիներու, երկաթուղիի ճամբաներու վրայ բանելու կամ ագարակատէրերու մօտ „նօքար" կերթան տարեկան 7—12 ոսկիով։ Հաղորդակցութեան միջոցներ և քանի մը գործարաններ մեծ բարիք մը պիտի բլլային պօզուքցիներու համար։ Գարապէրէգի մօտ շինուած նոր ոճով ալիւրի գործարանը մը օրհնութիւն մը եղաւ տեղացիներուն, որոնք գրեթէ պարտքերէ ազատած են։

Երկրագործութիւնը նախնական միջոցներով կը կատարուի, աւանդական լուծէն, եզէն, արօրէն ու խոփէն մաղի չափ չեն շեղած. գիւղացին կպած է եզին, փոխանակ ձի գործածելու, որ աւելի ձեռնտու է, և ինքն ալ եզի պէս դանդաղաշարժ եղած է։

Քանի տարիներէ ի վեր Ռուսիայէն գաղթած ու հոս հաստատուած չէրքէզները, շնորհիւ կառավարական լիաշնորհութեանց, հարստանալով եղած են վաշխառու վաճառականներ և ամեն հարիւրին 5—6 փոխ կուտան տուրքի համար նեղուած գիւղացուն և տոկոսը ամսէ ամիս կանխիկ կը գանձեն։

Ապառիկ մթերք տալու սովորութիւնը կար 10—12 տարի առաջ, այժմ բոլորովին վերցած է ի վնաս գիւղացուն։

Պօզուքի դաշտը կամ շրջանը նշանաւոր է իր բարեբերութիւնով։ Ցաճախ տեսնուած է որ երբ շրջակայ նահանգները սով պատահած է, Պօզուքի դաշտը օգնութեան հասած է։ Ամէն քանի մը տարի առաջ ցորենի գրիւը (մօտ 6 օխայ) տեղին վրայ կը ծախուէր 25 փարայի, իսկ փոխադրութեան ծախքն ալ հաշուելով դէպի շրջակայ մեծ քաղաքները 40 փարայի կուգար։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԱԶԵՖ

Այդ քստմնելի դաւաճանի անձնաւորութեամբ զբաղուում են այսօր ամբողջ համաշխարհային մամուլը և միջազգային յեղափոխական կուսակցութիւնները։ 1904

թեւի Հոկտեմբերեան ժողովին նա եւ ներկայ էր,—այդ անդրանիկ խորհրդաժողովին, ուր առաջին անգամը Ռուսաստանի դիմադրական ու սոցիալիստ, յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցիչները համախմբուել էին՝ խորհելու համար ընդհանուր, համերաշխ գործակցութեան միջոցներ։ Այդտեղ էին ռուսական կադետների ամենահեղինակաւոր պարագլուխները, լեհական երկու խոշոր հատուածները, ֆինլանդացիք, լատիշները, Հ. Յ. Դաշնակցութեան և վրացական ֆեդէրալիստների պատգամաւորները։ Ո՞վ կարող էր կարծել, թէ այդ կօնգրէսում, որ գումարուել էր յեղափոխական փոթորիկների նախօրեակին, ամենախիստ գաղտնապահութեան պայմանով հսկում էր դաւաճանի սրատես աչքը... Ազեֆ ներկայ էր բոլոր նիստերին, իր մի ուրիշ կուսակցի հետ, ներկայացնելով Ռուսաստանի սոցիալիստ-յեղափոխականներին, որոնց հռչակը տարածուել էր արդէն նոր կատարուած Պլէվէի մահափորձով։ Բայց ոստիկանական գործակալը չէր խօսում։ Համր ու անշարժ նստած էր նա մի ամբողջ շաբաթ, իր հսկայ ու գարշելի մարմնով, անասնական հրող կերպարանքով. բոլորի համար մի առեղծուած էր այդ ահագին մարդը... Մի անգամ միայն, երբ յեղափոխականների անձուկ շրջանում խօսք բացուեց Կովկասում ձեռնարկուելիք քայլերի մասին,—Ազեֆ միջամտեց և մի տարօրինակ, անկապ լեզուով իր մարտական հրահանգներն էր տալիս „Դաշնակցութեան“ պատգամաւորին... Մնացած ժամանակը լուռ մնաց և անտարակոյս զբաղուած էր միայն նրանով որ ըստ կարելւոյն շուտ տեղեկագրէ Պետերբուրգի կառավարութեանը իր կատարած հետազօտութիւնները և նշանաւոր գաղտնիքը *)...

Ազգերի յեղափոխական տարեգրութիւնների մէջ, անշուշտ, եզակի է դաւաճանութեան այս սարսափելի դէպքը. դժուար թէ որեւ է այլ երկրում, որեւ է այլ պարագայում դաւաճանը կարողացած լինի այնքան երկար տարիների ընթացքում շարունակել իր երկդիմի դաշտօնը, գրաւելով միաժամանակ առաջնակարգ, միահեծան դիրք երկու երդուեալ թշնամի բանակներում—մի կողմից յեղափոխականների, միւս կողմից արիւնարբու ժանդարմների մէջ։ Ցարիզմը՝ իր դիւային հնարքներով գերազանցեց, կարելի է ասել, պատմութեան բոլոր բռնաւոր ուժերից...

Գռեհիկ մատնիչի դիմակը պատռեց, թէև, դժբախտաբար խիստ ուշ... Պէտք է երախտագէտ լինել այն մի քանի գործիչներին, որոնք ազատեցին սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը և ամբողջ Ռուսաստանը մի այդպիսի հոյակապ ու վտանգաւոր չարագործից։ Ազեվի դերի գլխաւոր մերկացնողն է հին նշանաւոր յեղափոխական Բուրցեվ, որին մեծապէս օգնել է իր ջախջախիչ փաստերով օխրանայի նախկին գործակալ, Սիբիրից փախած (ու այժմ սոցիալիստ-յեղափոխական) Միխայիլ Բակայ, որ այսօր Պարիզի Matin-ում հրատարակում է ուշագրաւ ու սարսռեցուցիչ պատմութիւններ ռուսական գաղտնի ոստիկանութեան բարքերից։ Բայց որ ամենից արտառոցն է,—այդ անօրինակ գործի մէջ դաւաճանի մերկացումներով ու իր „յեղափոխական համակրութիւններով“ կասկածւում է այսօր մի այնպիսի մարդ, ինչպէս Լօպուխին, Ռուսաստանի նախկին գաղտնի ոստիկանութեան ամենազօր հրամանատարը։ Նա արդէն բանտն է նետուած.. Մինչդեռ Ազեֆը՝ ապահով շրջում է... գուցէ հէնց ռուսական ոստիկանութեան քթի տակ։

Դէպքն ընկած անլուր սկանդալից՝ ցարի կառավարութիւնը ուրիշ ելք չը գտաւ, բայց եթէ արդարացման վկայական տալ ոստիկան. յեղափոխականին։ Ստոլիպին, ի պատասխան ձախակողմի հարցապնդման ու յարձակումների, մի երկար ու ողորմելի պատճառաբանութեամբ յայտնեց, թէ կառավարութեան համար հաստատուած չէ Ազեֆի մասնակցութիւնը Պլեվէի, մեծ իշխան Սերգիի և այլոց մահափորձերում... Մինչդեռ այդ մասնակցութեան մասին վկայում է ինքը Ազեֆը, սոց.-յեղափոխականների կենտրոնին ուղղած իր նամակներում, որոնք կարդացուեցին Դումայի ամբիոնից...

Այդ մութ գործը դեռ կը շարունակէ յուզել հանրային կարծիքը։

*) Թէեւ այդ խորհուրդ մասնութեամբ պիտի բացատրել մասամբ այն անհատ բնաւորութիւնն ու հալածանքը, որ մղում է ռէակցիան սկզբից ի վեր նաեւ ռուսական կադէտների դէմ.. Այսօր արդէն Ռուսաստանում հռչակուած է այն իրողութիւնը, որ 1904-ի պարիզեան առաջին յեղափոխական խորհրդաժողովին նախագահել է ինքը Միլիւկովը եւ աջակողմեան մամուլը ոռնում է այդ առթիւ ու դատ է պահանջում կադետների առաջնորդի դէմ...

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՈՍԱՆՔԸ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ *)

II

„Պարլամենտական գործունէութիւնը արժէք չունի. ժողովրդական ձայնատուութիւն, ընտրողական քուէներ, բանուորական օրէնսդրութիւն, րէֆօրմներ եայլն — այդ բոլոր ոչինչ է կամ գրեթէ ոչինչ՝ աշխատաւոր դասակարգերի վերջնական ազատագրութեան համար“... Այսպէս են յայտարարում Նոր հոսանքի մոլեռանդ առաքեալները։

Այդտեղ եւս նրանք չարաչար մեղանչում են։ Ճիշդ է, անշուշտ, որ „բանուորական րէֆօրմները“ որքան էլ նրանք դրուած լինին լայն, մարդասիրական հիմքերի վրայ, չեն կարող այնուամենայնիւ հիմնականապէս փոփոխել ժամանակակից հասարակութեան էութիւնը, որ ամուր խարսխուած է կապիտալիստական մասնաւոր սեփականութեան արատաւոր սկզբունքի վրայ։ Նրանք չեն կարող ազատագրել աշխատանքը, չեն կարող լուծել դասակարգերի անհաւասարութիւնը։ Կապիտալի շահագործումներն ու աշխատաւոր զանգուածների թշուառութիւնը կը շարունակուին, իբրև մի տխուր, ճակատագրական իրողութիւն և նրանք վերջ կ'առնեն միայն այն ժամանակ, երբ ինքը պրօլետարիատը իր ձեռքը կ'առնէ քաղաքական ղեկը, երբ նրա ձեռքով կը յեղաշրջուի սեփականութեան հաստատութիւնը, երբ արդիւնաբերութեան բոլոր գործիքներն ու միջոցները—հող ու հանքեր, գործարաններ ու մեքենաներ—կը դրուին ամբողջ հասարակութեան, ամբողջ աշխատաւոր համայնքի տրամադրութեան տակ, իբրև կօլլեկտիվ հաւաքական սեփականութիւն (collectivisme), կամ, ուրիշ խօսքով, երբ իւրաքանչիւր մի աշխատող անհատ բացարձակ տէրը կը լինի իր աշխատանքի բովանդակ արդիւնքի։

Րէֆօրմները ներկայ կարգերում չեն կարող

*) Տես „Դրօշակ“ № 11—12:

ջնջել հարստի ու աղքատի երևոյթը—այդ այդպէս է։ Սակայն նրանք կարող են աստիճանաբար թեթևացնել, ամոքել թշուառութիւնը, կարող են մի յայտնի չափով բարձրացնել հարստահարուած դասակարգերի նիւթական, մտաւոր ու հոգեկան վիճակը, կարող են, բացի դրանից, հարթել հետզհետէ աշխատաւորական կռուի ճանապարհը, ստեղծել միշտ աւելի նպաստաւոր պայմաններ այդ կռուի կազմակերպման ու նրա վերջնական յաղթանակի համար։

Եւ սօցիալիստ կուսակցութիւնների քաղաքական, պարլամենտական գործունէութիւնը իրօք ծառայում է այդ նպատակին. համոզուած՝ որ ազատութեան ու եղբայրութեան իդէալը պէտք է իրագործուի աստիճանաբար, հասարակութեան շարունակական բարեշրջումով ու վերջին վճռական պատերազմով՝ նրանք, այդ կուսակցութիւնները ձգտում են ստեղծել կ ա յ ա ն ն ե ր, էտապներ դէպի անդրագոյն իդէալ-նպատակը։ Ռէֆօրմները այդ—կայաններն են։

Ճիշտ է, պետական կազմակերպութեան նոյնիսկ նորագոյն ռամկավարական ձևերը չեն արգելում դասակարգերի սուր բաղխումները, և կապիտալիզմը՝ վարձու աշխատանքի ու „յաւելեալ արժէքի", շահագործման ու սարկացման իր սիստեմով՝ չեշտւում է անգամ աշխարհիս ամենառամկավար երկրներում — Հիւսիսային Ամերիկայում, Շւէյցարիայում, Ֆրանսիայում—սակայն ո՞վ չը գիտէ, որ այնուամենայնիւ Շւէյցարիայի, Միացեալ Նահանգների կամ Ֆրանսիայի պետական ձևերը համեմատաբար լաւագոյնն են, թէկուզ աշխատաւոր լայն զանգուածների շահի տեսակէտից։ Այնտեղ, ուր այդ զանգուածները, տիրող ազատ կարգերի շնորհիւ, հնարաւորութիւն ունին ընդարձակօրէն մասնակցելու երկրի քաղաքական ու սօցիալական ղեկավարութեան մէջ, ուր ժ ո ղ ո վ ո ւ ր դ ը, թէ իր ընտրեալ մարմիններով և թէ ուղղակի, զանգուածային միջամտութեամբ (ժողովրդական նախաձեռնութիւն, ռէֆերենդում Շւէյցարիայում) կարող է բազմաթիւ հարցերի նկատմամբ իր սեփական կնիքը դնել օրէնսդրութեան վրայ,—այնտեղ, բնականաբար, „սօցիալական երջանկութիւնը" գոյութիւն ունի համեմատաբար մեծ չափերով, կամ թէ աւելի՝ „սօցիալական (աշխատաւորական) թշուառութիւնը" գոյութիւն ունի նւազ չափով. այդ երկրներում նաև տեսնում ենք իրագործուած նպաստաւորագոյն պայմանները սօցիալիստական գաղափարների ազատ, անկաշկանդ պրօպագանդի համար։ Բոլոր պետական սիստէմների մէջ հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ ի ւ ն ը ամենից գերադասելին է, քանի որ այդ ձևի տակ ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն գ ե ր ի շ խ ա ն ո ւ թ ե ա ն սկզբունքը իրականանում է իր մեծագոյն ծաւալով. և որքան էլ բարձր ու պատկառելի կանգնած լինի անգլիական սահմանադրութիւնը ժամանակակից աշխարհում,—նրանից աւելի բարձր է ամերիկական, ֆրանսիական և մանաւանդ շւէյցարական հանրապետութիւնը։ Զուր չէ, որ սօցիալիզմը միապետական-սահմանադրական երկրներում իր նւազագոյն ծրագրի հիմնակէտերից մէկն է դարձրել՝ հ ա ն ր ա պ ե տ ա կ ա ն կ ա ր գ ե ր ի պահանջը...

Եւ սակայն, կան այսօր ֆանատիկոսներ սօցիալիստական բանակում, որոնք երբեմնապէս հրապարակ են նետում այս անհեթեթ ֆրազը.

—„Քաղաքական ձևերը անտարբեր են, ռամկավարութիւնը սոսկ պատրանք է, խաբէութիւն. պրօլետարիատի համար միևնոյն է՝ լինի Ֆրանսիայում մի Վիլհելմ թէ մի Ֆալիէր, հանրապետութիւն թէ սահմանադրական միապետութիւն"։

Այդ ֆրազը հոլովում են և յեղափոխական սինդիկալիստները, որոնք առհասարակ մեծ արհամարանք են ցոյց տալիս մասնաւորապէս դէպի Ֆրանսիայի այժմեան կարգերը։

Ռամկավարութիւնը (démocratie) պատրանք չէ, ինչպէս որ պատրանք չեն եւրօպական լիբերալիզմի (ազատական հոսանքի) բոլոր միւս պատմական արգասիքները։ Ս օ ց ի ա լ ի զ մ ը այդ լիբերալիզմի բնական ծնունդն է և նրա հարազատ, տրամաբանական շարունակողը։ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը, որից և գլխաւորապէս բղխում է արևմտեան լիբերալիզմը, չը կարողացաւ—ժամանակի, պայմանների տհասութեան պատճառով—իրագործել իր ազդարարած հաւասարութեան ու եղբայրութեան սկզբունքները. նա կանգնեց կէս ճանապարհին, նա տւեց աւատական տարրերից խլուած առանձնաշնորհումները մի նոր տարրի՝ բուրժուազիայի կամ փողատէր դասակարգի ձեռքը և դրանով յարատևեց կեղեքումը, դասակարգային անհաւասարութիւնն ու կռիւները։ Ծնունդ առաւ նոյն լիբերալիզմի հնոցից սօցիալիստական վարդապետութիւնը, որ նպաստաւորւելով տնտեսական զարգացման համաշխարհային ընթացքից, շարունակեց իր ծնողի սկսած գործը և այսօր յաղթականօրէն տանում է այն՝ դէպի իր ճակատագրական վախճանը։ Ահա թէ ինչու. լինելով հանդերձ ջերմ, մոլեռանդ սօցիալիստներ, մենք չենք կարող արհամարհել այն փառահեղ ու պատմական հոսանքը, որ տւել է—թէկուզ բուրժուազական ռամկավարութեան դրօշակի տակ—այնքան պանծալի նւաճումներ, ինչպէս ընդհանուր ձայնատւութիւն (suffrage universel), ազգային ներկայացուցչութիւն, խօսքի, մամուլի ազատութիւն ևայլն։

Ինքը յեղափոխական սինդիկալիզմը նոյնպէս այդ նւաճումների ծնունդն է։ Շնորհիւ այն քաղաքական ազատութիւնների, որոնք գոյութիւն ունին Մեծ Յեղափոխութեան հայրենիքում,—այսօր ամենածայրայեղ գաղափարները ք ա ր ո զ ւ ո ւ մ ե ն այնտեղ ազատ, անկաշկանդ և աշխարհի ամենահոյակապ բանւորական մարմիններից մինը, Ա շ խ ա տ ա ն ք ի Ը ն դ հ ա ն ո ւ ր Դ ա շ ն ա կ ց ո ւ թ ի ւ ն ը (Confédération Générale du Travail), իր կէս անիշխանական, կէս սինդիկալիստ-յեղափոխական կազմով՝ բազմած է Պարիզում, իբրև մի տեսակ աշխատաւորական պետութիւն՝ բուրժուական պետութեան ծոցում...

Ռամկավարութիւնը, ուրեմն, չի կարելի ժխտել, արհամարհել. ռամկավարական հաստատութիւնները պէտք է միայն աստիճանաբար կատարելագործել՝ թէ ներկայի և թէ ապագայի համար։ Սօցիալիզմի յաղթանակը կը լինի ոչ այլ ինչ՝ բայց եթէ ռամկավարութեան գերագոյն ձևի իրականացումը։

Աշխատաւոր դասակարգի համար բնաւ անտարբեր մի իրողութիւն չէ, երբ, օրինակ, այլևայլ քաղաքակիրթ երկրների մէջ կատարւում է պետութեան ու եկեղեցու զատման պրօցէսը, երբ դրանով աշխարհիկ ոգին յաղթանակում է կղերականի դէմ, և նոր սերունդների կրթութեան ու դաստիարակութեան գործը ազատւում է միջնադարեան մութ, բռնաւոր ու դօգմայապաշտ ուժերի խնամակալութիւնից։

Անտարբեր մի իրողութիւն չէ նոյն աշխատաւոր դասակարգի համար, երբ կրճատւում են զինւորական ծառայութիւնը և ազատւում նրա զաւակներին երկար տարիների բթացուցիչ մարզանքներից, զօրանոցների մէջ, — մարզանքներ, որոնք որքան աւելի են տևում, այնքան աւելի են արմատացնում զինւորների մէջ աւտօմատիզմը, մեքենայական, կոյր դիսցիպլինը, հլու սարկամիտ երկրպագութիւնը բուրժուազական աստուածների առաջ... Իսկ թէ որքան տուժում է գիւղացու, աշխատաւորի տնտեսութիւնը գործօն ուժերի այդ երկարատև բացակայութիւնից—այդ էլ պարզ է իւրաքանչիւրին։ Երբ զինւորական ծառայութիւնը աստիճանաբար կրճատւելով, կը յանգի իր նւազագոյն աստիճանին, երբ կ'իրագործւի ռամկավարութեան հիմնական պօստուլատներից մինը և բոլոր քաղաքակիրթ երկրներում կայուն մ շ տ ա կ ա ն բ ա ն ա կ ն ե ր ը կը փոխարինւին ժողովրդական ինքնապաշտպան միլիցիաներով (նման շւէյցարական սիստէմին)—դա անտարակոյս, զգալի թեթևութիւն կը բերի աշխատաւոր ու տառապող ընդհանրութեանը, կը պակասեցնէ միլիտարիզմի անողոք հարստահարումները և կը դիւրացնէ մասսաների կազմակերպման ու պայքարի գործը։

Անտարբեր չեն կարող լինել հարստահարուած խաւերի համար և այն մի շարք ռէֆօրմները, որոնք ձևակերպւում են տ ն տ ե ս ա կ ա ն հ ո ղ ի վ ր ա յ. հարկային սիստէմի բարեշրջում, եկամտային տուրք, պրօգրէսիվ-եկամտային տուրք ևայլն։ Հարկ չը կայ շեշտելու ահագին կարևորութիւնը այն ամբողջ օրէնսդրութեան, որ կրում է „աշխատաւորական" անունը և որի նպատակն է ըստ կարելւոյն

սահմանափակել կապիտալի շահագործման պատուհանները, կրճատել բանուորական աշխատամիջոցը, բարձրացնել օրավարձը, ապահովել ծերուններին, կանանց ու երեխաներին, բոլոր թույլերին, գոյութեան կռիվ բոլոր զոհերին, ստեղծել մարդավայել կեանք պրոլետարիատի ու հարստահարված գիւղացիութեան համար։

Այդ բոլոր ռեֆորմներն իրագործելու համար անհրաժեշտ է, անշուշտ, բուն աշխատաւորութեան մասսային ու յարատև կազմակերպումն ու պայքարը յաճախ զուտ անտեսական հողի վրայ, բայց նոյնքան անհրաժեշտ է և նրա ներկայացուցիչների—սոցիալիստական կուսակցութիւնների—քաղաքական կռիւը, կամ ուրիշ խօսքով՝ պարլամենտարիզմը, որ բացասում՝ են նոր, սինդիկալիստները։ Այդ հողի վրայ աշխատաւորների ներկայացուցիչները յաճախ համերաշխութեան ձեռք են մեկնում բուրժուազիայի ձախակողմեան, առաւելապէս դեմոկրատ տարրերին և ընդհանուր միացած կուռվ չեզոքացնում են ռեակցիայի հակադարձ ուժերը... Արդէն նախորդ յօդուածների մէջ մենք ցոյց ենք տուել, թէ որքան անմիտ ու վտանգաւոր մի խաղ կը լիներ պրոլետարիատի, աշխատաւորութեան համար՝ փակուել մի անհաշտ, կղզեացած դիմադրութեան մէջ, անջատուել իսպառ սոցիալական միջավայրից և կռիւը, որ մի միջոց է դէպի իդէալը—դարձնել միակ ու գերագոյն նպատակ...

Աշխատաւոր ընդհանրութեան համար ծանրակշիռ կարևորութիւն ունի և այն քաղաքական կռիւը, որ նա ինքն է մղում, ուղղակի և զանգւածօրէն՝ պարլամենտական, ընտրողական պայքարների միջոցին։ Սինդիկալիզմը արհամարհանքով է խօսում ընտրական քւէների մասին և նրա մոլեռանդ փաստաբաններից մինը, Դիւստաւ Էրվէ, Շտուտգարտի միջազգային սոցիալիստական կոնգրէսի մէջ հանդիսաւոր նախատինք էր շպրտում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի դէմ, որ նա անուանում էր լոկ „քւէների մի շտեմարան՝, „ամատուրքերի մի ահագին դրամարկղ՝։ Ճշմարտութիւն կայ, անշուշտ, սինդիկալիստական քննադատութեան մէջ, երբ նա հանրային ուշադրութեանն է մատնում այն քաղաքական անշարժութիւնը, որին վաղուց ի վեր մատնուած է Գերմանիայի լայնատարած սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը և այդ հանգամանքը առանձնապէս շեշտուեց վերջին հանդիսաւոր, պատմական վայրկեանում, երբ Վիլհելմ II-ի աղաղակող վրիպումների շնորհիւ երկիրը բառականաչափ յուզուել էր և հարց էր ծագել՝ վերաքննելու սահմանադրութիւնը, հաստատելու իսկական ժողովրդական դերիշխանութիւն։

Սակայն չը պէտք չափազանցնել յարձակողական տենդը և ուրանալ թւի, քանակի այն հզօր ուժը, որ ունի գերմանական սոցիալիզմը։ Երեք ու կէս միլիոն ընտրող, գիտակից քաղաքացիներ, որոնք կանգնած են այդ երկրում սոցիալիստական դրօշակի տակ—բնաւ չեն ներկայացնում արհամարհելի մի քանակութիւն։ Միշտ աւելի և աւելի աճելով իր թւով ու որակով, դաղափարական կուռ, անսասան կարգապահութեամբ՝ այդ մեծ բանակը, որի նմանը չունի Գերմանիայի ոչ մի ուրիշ կուսակցութիւն—մի ահեղ ուժ է կառավարութիւնների և բոլոր իշխող դասակարգերի համար, մի յարաճուն սպառնալիք, չը նայած յեղափոխական իր խառնուածքի թուլութեան ու իր շարժման դանդաղկոտութեան։

Ընդհանուր ընտրողական իրաւունքը և ընտրական պայքարները, որոնց վրայ այնքան բարձրից են նայում սինդիկալիզմի մոլեռանդները,—մի հսկայական մարզարան են աշխատաւոր դասակարգերի ու սոցիալիզմի համար։ Ցանցանք կը լիներ, եթէ նրանք չ՝օգտուէին ռամկավարութեան այն սքանչելի նւաճումից, որի անունն է ժողովրդական ընդհանուր ձայնատուութիւն և որ ներկայացնում է կուռ, մրցութեան մի գերազանց հող։ Եւ սոցիալիստական կուսակցութիւնները բոլոր երկրներում ձգտում են շահագործել ըստ կարելւոյն լայն չափերով պրոպագանդի այդ մանաւանդ մեծ գործիքը, որի շնորհիւ նրանք աջողում են շարժել, հաւաքել սոցիալիզմի դրօշակի տակ ոչ միայն գործարանական պրոլետարիատին, այլև յաճախ ազգաբնակութեան ուրիշ խաւեր—արհեստաւորութիւն, մանր վաճառականութիւն, մանր գիւղացիութիւն, մտաւորականութիւն—որոնք բոլորն էլ այս կամ այն ձևով տառապում են կապիտալիզմի անիրաւ կարգերի հետևանքներից։ Սոցիալիզմը ձգտում է կատարելագործել դեմոկրատիզմի պարգևած գործիքը—ընդհանուր ընտրողական իրաւունքը, ձգտում է դարձնել այն իրօք ընդհանուր, տարածւած մարդկութեան երկու սեռի վրայ, հիմնւած առողջ դատողութեան ու արդարութեան սկզբունքի վրայ։ Այդ մտքով է, որ ներկայումս սոցիալիստական կուսակցութիւնները ամենուրեք ընդունել են իբրև նշանաբան՝ համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը (*Représentation proportionelle*), որի կիրառութեամբ իւրաքանչիւր մի քաղաքական կուսակցութիւն այնքան աւելի ներկայացուցիչներ պիտի ունենայ պարլամենտում, որքան աւելի հմանահներ ունի երկրի մէջ։ Կուսակցութիւնները, հետևաբար, պիտի հանդէս գան ազգային պատգամաւորական ժողովներում իրենց իսկական կերպարա՝քով, իրենց անխարդախ թւական ուժով, պարլամենտները պիտի ներկայացնեն երկրի ճշմարիտ պատկերը, կուսակցական ուժերի ու նրանց փոխադարձ յարաբերութիւնների ջինջ հայելին—և այն ժամանակ սոցիալիզմը քաղաքակրթւած աշխարհի պարլամենտներում՝ պիտի եռապատկէ ու քառապատկէ իր ընտրեալների քանակը, այն ժամանակ գերմանական սոցիալ-դեմոկրատիան, ի տեղի 43 պատգամաւորի՝ պիտի ունենայ—իր 3,500,000 ընտրող ձայների համապատասխան—մօտ երրորդ մասը Ռայխստագի ամբողջ պատգամաւորութեան։

Եւ սոցիալիզմը օգտւում է ընդհանուր ձայնատուութեան սկզբունքից ոչ միայն պարլամենտների, բարձրագոյն օրէնդիր ժողովների համար, այլև այն բոլոր հաստատութիւնների, որոնց մէջ նա ուզում է բուն դնել իր քաղաքակրթիչ ու ազատարար գործունէութիւնը մղելու համար։ Սոցիալիզմը ձգտում է, օրինակ, նւաճել քաղաքային խորհրդարանները (*Conseils municipaux*) և այդ նպատակով եռանդուն մասնակցութիւն են յոյց տալիս ամեն անգամ քաղաքապետական ընտրութիւնների մէջ. տասնեակ տարիների յամառ պայքարի շնորհիւ, այսօր Ֆրանսիայում մի շարք քաղաքներ սոցիալիզմի գիրկն են անցել. սոցիալիստներն նրանց խորհրդարանների ճնշող մեծամասնութիւնները, որոնք յատուկ օրէնքներ են մշակում քաղաքների ներքին բարեկարգութեան համար, սոցիալիստ են և քաղաքապետները, որոնք կոչւած են ի կատար ածելու այդ օրէնքները, վերահսկելու այդ բարեկարգութեան ու հանրային խաղաղութեան վրայ։

Այդ համառարած պրոպագանդը և այդ յամառ ու կորովի արշաւանքը դէպի բուրժուական հասարակութեան ամրակուռ բերդերը—դա մի փաստ է, որի ահագին կարևորութիւնը անհնարին է ժխտել լուրջ, բանաւոր պատճառաբանութեամբ։ Այդ արշաւանքով, ընտրողական իրաւունքի այդ բուռն ու սիստեմատիկ շահագործումով՝ սոցիալիզմը, ինչպէս մասամբ շեշտեցինք նախորդ էջերում, հետամտում է երկու նպատակի. նա որոշ չափով գոհացում է տալիս բազմատանջ աշխատաւորութեան պահանջներին՝ արդէն ներկայումս նա կռւում է միաժամանակ իր լեգէօնները՝ հանդէպ ապագայի. նա հետզհետէ ստւարացնում է իր բանակը, կազմակերպում է ու դաստիարակում իր ջինջ ու վեհ իդէալի դպրոցի մէջ և անպարտելի շարքերով տանում է նրան դէպի գալոց մեծ պատերազմը—ամենամեծ ու ամենավեհ ճակատամարտը, որի նմանը աշխարհը չի տեսել և որի մէջ աշխատաւոր ընդհանրութիւնը, գոյութեան դարաւոր մենամարտի այդ գզգզւած, արիւնշաղախ զոհը, պիտի կորցնէ վերջապէս իր մարմնի, խղճի ու մտքի վրայ ծանրացած բոլոր շղթաները...

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Համատարած ռէակցիան օրէցօր աւելի ու աւելի ուժեղանում է։

Բռնակալական սանձարձակութիւնը այլեւս ոչ մի չափ ու սահման չէ ճանաչում։

Բիւրոկրատիան չը տեսնուած համարձակութեամբ շարունակում է սարսափների քաղաքականութիւնը։

Ամբողջ երկիրը բաժանած ունենալով առանձին սատրապութիւնների՝ զինւորական գեներալ նահանգապետութիւնների, նա աճաբեկել է ազգաբնակութիւնը բանտերով, աքսորով ու կախաղաններով։

Նա իր հովանաւորութեան տակ է վերցրել բոլոր մութ ուժերի, որոնք սեւ ագռաւների նման կռանչում են աջ ու ձախ՝

— Արի՜ւն... աւերածութիւն...

Եւ տնքում է ողջ Ռուսաստանը ցարիզմի ծանր լծի տակ։

Բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ այդ լուծը ամենից աւելի դաժանօրէն սեղմում է ծայրագաւառները։

Ֆինլանդիա, Լեհաստան ու Կովկաս նորից դարձել են քաւութեան նոխազներ, որոնց գլխին հրէշաւոր դաւեր են ծրագրւում ու նիզակներ ճօճւում։

Եւ համապետական այդ դժոխային պայմաններում, ընդհանուր ծայրագաւառային այդ անզուսպ հալածանքների մթնոլորտում նորից գլուխ է բարձրացրել հայակեր, հայահալած քաղաքականութիւնը իր բոլոր արտայայտութիւններով։

Ամենայետամնաց գաւառներից սկսած, մինչեւ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսը, լի են բանտերը հազարաւոր անմեղ զոհերով, դառն արցունք են քամում անթիւ ընտանիքներ, իրենց կերակրող ձեռքերից զրկւած։ Հալ ու մաշ են լինում հարիւրաւորները հեռո՜ւ, ցրտաշունչ աքսորավայրերում՝ Արխանգելսկից մինչեւ Վեստկա-Սիբիր։

Նոյն իսկ այս վերջին օրերին, երբ Կովկասի բոլոր ծայրերից հլու հպատակութեան ձայներ են հնչում ընդդէմ Պուրիշկեւիչեան զրպարտութիւնների, բռնակալ ցարիզմի գործակալները չը տեսնւած ցինիզմով շարունակում են իրենց գործը, աւելի մեծ թափով։

Միայն երկու շաբաթւայ ընթացքում քանի՜ հայ գրողների, ուսուցիչների ու աշակերտների, բժիշկների, փաստաբանների եւ խեղճ ու կրակ աշխատաւորների լցրին Մետեխի մութ-մռայլ խորշերը եւ դեռ քանի՜սին նոյն վիճակն է սպառնում։ Բայց այդ դեռ բոլորը չէ։ Կառավարութիւնը ձգտում է կաշկանդել հայի ազգային կուլտուրական բոլոր գործօնները։

Նորից սեւ ամպեր են կուտակւում հայ դպրոցների գլխին։

Նորից սատրապներ յափշտակիչ հայեացք են ուղղել դէպի հայոց եկեղ. դպրոցական կալւածքները։

Իսկ հայ լեզուն ու գրականութիւնը կաշկանդելու, կաթողիկոսական իրաւունքները սահմանափակելու հոգսը վաղուց զբաղեցնում է ցարի մինիստրներին։

Եւ որպէսզի այդ բոլոր հեռաւոր ու մօտաւոր ծրագիրները հեշտութեամբ իրականացնել կարողանան — ահա նրանք փորձեր են անում ոչնչացնելու, ջախջախելու այն խանգարիչ ուժը, որ հայ աշխատաւոր ժողովրդի ծոցից ծնւած, միշտ էլ պաշտպան է եղել նրա իրաւունքներին ու շահերին։

Այն ուժը, որ իր կուրծքը դէմ տւեց Պլեվէի, Գօլիցինի ռէժիմին եւ կարողացաւ յետ խլել հայ դպրոցներն ու կալւածները, որ բիւրոկրատիայի հրէշաւոր պրովոկացիայի շնորհիւ բռնկւած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ կարողացաւ պաշտպանել ժողովրդի կեանքը, գոյքն ու պատիւը, որ ամեն տեղ հրապարակ է գալիս հալածւածներին, հարստահարւածներին փրկութեան գողգոթան բարձրացնելու — այդ ուժը ցանկացաւ ոչնչացնել...

Ոչնչացնե՜լ Հ. Յ. Դաշնակցութիւնը, բայց մի՞թէ հնարաւոր է դա։

Մի՞թէ հալածանքներից ընկճւել կարող է այն կազմակերպութիւնը, որ մօտ երկու տասնեակ տարիներ անցել է արեան, բանտերի, կախաղանների ճանապարհով՝ առանց մի րոպէ խոնարհելու իր դրօշակը, որ հերոսական քայլերով դիմագրաւել է բռնակալութեան հարւածները՝ առանց մի յուսահատութեան ճիչ արձակելու։

Ո՛չ։ Դա անկարելի է։ Դա ցնորք է։

Ինչպէս որ համատարած ռէակցիան անկարող է լինելու ոչնչացնել Ռուսաստանի աշխատաւորութեան յարաճուն ըմբոստացումը, ինչպէս որ բռնակալութեան սոսկալի հարւածները միայն աւելի զտելու եւ անխզելիօրէն շաղկապելու են նրա յեղափոխական տարրերը, ճիշտ այդպէս էլ հակահայկական բոլոր հալածանքները աւելի շեշտելու են Հ. Յ. Դաշնակցութեան անհրաժեշտութիւնը իբրեւ փրկութեան մի փարոսի։

Որքան սաստկանան հարւածները վերեւից, նոյնքան ամրանալու է ընդդիմադիր ուժը ներքեւից։

Եւ ինչպէս միշտ, նոյնպէս այս ծանր օրերին, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը ծածանէ իր նւիրական դրօշակը, նրա շուրջը հրաւիրելով ժողովրդական լաւագոյն ուժերին։

Եւ այդ ուժերը անձնազոհ շարքերով կը շարունակեն յեղափոխական կարմիր պայքարը յանուն ազատութեան ու հաւասարութեան, միշտ բարձր հնչեցնելով նրա նշանաբանը։

Թող կորչի՛ բռնակալութիւնը
Կեցցէ՜ ազատութիւնը
Կորչի՛ շահագործումն ու ճնշումը
Կեցցէ՜ հաւասարութիւնը
Կեցցէ՜ Հայ Յեղ. Դաշնակցութիւնը։

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Ը ն կ ե ր ն ե ր,

Ցանկանալով մի ընդհանուր վիճակագրութիւն կազմել ժամանակակից բռնակալութեան զոհերի մասին, սրանով խնդրում ենք հաղորդել հետեւեալ տեղեկութիւնները.

1) Վերջին երկու տարիներում (1907—1908 թ.) ձեր շրջանի դաշնակցական ընկերներից քա՞նիսն են բանտարկւել եւ որքան ժամանակով։

2) Քա՞նիսն են աքսորւել եւ որքան ժամանակով։

3) Այժմ քա՞նիսն են մնում դեռ բանտարկւած կամ աքսորական։

Այդ տեղեկութիւնները ուղարկեցէք ծրնեվ՝ „Դրօշակի“ հասցէով։

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

«Դրօշակ», պաշտօնական թղթեր, ծածկագիր պատկերներ և բաց-նամակներ ստանալու համար պէտք է դիմել «Դրօշակի» խմբագրութեան։

Ն Ւ Ի Ր Ա Տ Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նուախանգաշի Կեդր. կոմիտէն ստացած է՝

Յունուարի 1-ից յուլիսի 1 1908. — Սրս.-ի բանւոր միութիւն 68 ռուբլի 90 կոպ., Ռուս. արհ. բանւ. միութիւն 20, Արշաւիր խ. անդամ Պետր. 10, Կօշկ. արհ. միութիւն 11. 78 Դերձակուհիների արհ. միութիւն 100. 50, Դերձակ խ. 9, Ռուս. արհ. բանւ. միութիւն 10, Կաշեգործ. արհ. միութիւն 7. 93, Դերձակ խ. 10, Գարպ. բանւ. միութիւն 7, Ռուս. արհեստ. բանւ. միութիւն 10 ռուբ., Մ. Կիրակ-ից նուէր 90 կ., Սիս. բանւ. միութիւն 68. 58 ռ., Փարոս խ. 13. 20, Մանր-ի թիթեղի բաժանմունքից 5. 75, Ռուս. ընկ. արհ. բանւ. միութիւն 33, Կաշեգ. բանւ. միութիւն 6. 93, Դերձակ խ. 9, Վարազդատ խմբի ապառիկներից 6, եւս նոյն խ. 6, Դերձակ խ. 7, Ռուս. ընկ. արհ. բանւ. միութիւն 33 ռ.: Գումար 454 ռուբլի 47 կոպէկ:

ՋՐԱՇԷՆԻ ԿՈՄԻՏԷՆ յունուարից յուլիս. — Բանւ. խորհրդի վարչութիւնից 187 ռուբլի 82 կոպէկ.: Նուիրատուներն են՝ Կոչմանի արտելից 15 ռուբլի 83 կոպ., Ֆորժ-սեամբ. 9 60, Սամարի 13. 66, Վարդանովի 18. 37, Օհանէսովի 21. 61, Կոչմանի արտելից եւս 6. 10, Ֆորժ սեամբ-ի 7. 90, Վարդանովի 3. 85, Օվանէսովի 7. 28, Պանասի 30. 35,

եւս 35. 92, Սամարի 12. 35, Սարդ խումբ 72, Բանւ. խորհր. վարչութիւնից 35. 94 ռուբլի. Նւիրատուներն են՝ Ֆորմ-ստամբ. արտ. 8. 50, Սեվերնի 16. 54, Կոչմանի 2. 50, Ռոս.-ի բանւորներ 3. 58, Օվանէսովի արտէլից 4. 82 ռ.: Գումար 395 ռուբլի 76 կոպ.:

ՆՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԻՆ յունւարից յուլիս. — Հացագործից տարեվճար 25 ռուբլի, Եղբ. Բօյաջիացի 1907-ի մնացորդը 14, եւս 1908 եռամսեակ 18, Եղբ. Ք.-ից 4 ամսական 40, Ֆրանսից նւէր 15 ռ.: Գումար 112 ռուբլի:

ԴԻԱՇՏԻ ԿՈՄԻՏԷՆ յունւարից յուլիս.—Չարմայր 40 ռուբլի, Վազգէն 9: Գումար 49 ռուբլի:

ԿԼՕՐԻԿԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ յունւարից յուլիս. — Խեղճ 6 ամս. 48 ռուբլի, Յոյս խ. 1907-ի տարեվճար 23. 50, Արթուն խ. 17. 50, Փիր-Չավուշ խ. 15. 50, Արթուն խ. 16, եւս 17, Փիր-չավուշ խ. 17. 50, Հայկ 12, Կայծակ 3. Բրինձ 18, Սէր 12, Փայլակ 6, Փիր չավուշ խ. 9 ռ.: Գումար 214 ռուբլի:

ԿԱՅԾԻ ԿՈՄԻՏԷՆ յունւարից օգոստոս. — Աս-ից I եռամսեայ 45 ռուբլի, Արեօլ խ. 80, Սերոբ-Աղբիւր խ. 20, Զէյթուն 23. 60, Գեսափի ընկերներից 44. 40, Նէմրութ խ. 40, Առիւծ խ. 42, Գիսակ խ. 53, Սերոբ-Աղբիւր խ. 111 տասնեակ 14. 50, Մոսկան խ. 31. 50, Կարմիր խաչից 100, Օսա-ից եռամսեայ վճար 45, Վանիրին խ. 9, Երեկոյթից 20, Օսա-ից եռամսեայ վճար 45, Կարմիր խաչից եւս 150, Մոսկան խ. 6, եւս 8, եւս 8. 50 ռ.: Գումար 785 ռուբլի 50 կոպէկ:

ԾԱՂԿԱՁՈՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ յունւարից յուլիս.—Աւես-ից զանազան անձերից 45 ռ., Հրէից նւէր 45, Հերոսական խ. 5, եւս 5: Գումար 100 ռուբլի:

ՁՈՐԱՓՈՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ յունւարից յուլիս. — Հետեւեալ խմբերից՝ Լոյս 4 ռուբլի, եւս 8, Զին. մնացորդը 14. 83, Սերոբ-փաշա 36, Դաւիթ-Բէգ 3. 50, Լոյս 5. 50, Մասիս 7. 25, Մայր 10, Սերոբ-փաշա 9, եւս 9, Լոյս 17. 50 ռ.: Գումար 124 ռուբլի 58 կոպէկ:

ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷՆ յունւարից յուլիս. — Ջրափի իշխան խ. 56. 55 ռուբլի, եւս 11, Բանւոր. 1905-ի եկամտային տուրքից Ս.Կ-ից 250, Բարեկամից նւէր 25, Սիրողից 15, Յոյս 20, Բագրատունի 100, Հայի 200, Արամս 25, Բաբկին 25, Աւքանսիլ 15, Արտաշ 20, Խուդ 30, № 1 գրասենեկից 50, Հայից 40, ԱՆՏԱՌԻ Տարօն խ. 10. 68 ռուբլի:

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ՔԱՂԱՔ. ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ

Ընկ. Ազ-ի միջոցով 8 ռուբլի. Նւիրատուներն են՝ Վարդ. Մուր. 1 ռ., Յ. Խաչ. 50 կ., Խաչ. Դալէմ. 50 կ., Ս. Մկրտ. 5 ռ., Պետր Դալվ 1 ռ.:

Ապաստանի ընկերների միջոցով Նոր Գ.-ից 15 ռուբլի. Նւիրատուներն են՝ Ե. Գ. 1. 5 ռ., Մ. Եր., Պ. Մ., Պ. Ն., Յ. Օհ., Ե. Եղ., Ա. Զ., Ս. Եղ., Ա. Եղ., Մ. Եղ., Մ. Գ., Մ. Կ., Մ. Եր. 1-ական ռ., Գ. Եր. 50 կ., Յ. Յ. 20 կ., Գ. Շիշ 20 կ., Ա. Եր. 20 կ., Մ. Ն. 50 կ., Գ. Ս. 35 կ.:

Կլօրիկի ընկերների միջոցով 15 ռուբլի 25 կոպ. Նւիրատուներն են՝ Երկու խմբ. Փիր-չավուշ 9. 50 ռ., Աշոտ 1, Խ. Մ. 1 ռ., Վահագ 50 կ., Աղաչան 25 կ., Լուսեղէն 25 կ., Ռշտունի 50 կ., Հուր 40 կ., Երկաթ 50 կ., Կրակ 25 կ., Նոր-ն 30 կ., Կացիցին 30 կ., Կոմիս 50 կոպ.:

Ծաղկաձորից Տ. Ստ-եանի միջոցով 7 ռուբլի. Նւիրատուներն են՝ Յովհաննէս 1 ռ., Գէորգ, Միքայէլ, Գրիգոր, Իվան, Կուժկով, Պետր, Պետր, Միրշ, Խ., Զավոր 50-ական կ., Յունյու 30 կ., Ոմն 20 կ., Դրի 40 կ.:

Կեդրոնական VI Կոմիտէն՝

1908 դեկտեմբերին ԽԱՌՆ քաղաքի հետեւեալ նւիրատուներից. — Թէրզին 300 ռուբլի, Պօղոս 237, Մոխիր 200, Կապլան, Առաքել, Կարապետ, Աբգար, Չումպլ 100-ական, Մինծ-աղան, Խուց, Երիմեան, Սարգիս-աղան 50-ական, Օհաննէսով 30, Մնացական, Դաւիթ, Հայկ, Մեղր, Գ. Գասպ., Թոռուն, Լօժէն, Ռօբէրդ, Ռաֆայէլ, Ալէքսիանոս 25-ական, Ամիրխան, Բոկաց, Վարդանիկ, Մոսէոն 20-ական, Խոսրշ, Վայնկան, Տիկ. Եկանոմ., Հաջի 15-ական, Նազարով, Բաղդասար, Յարութիւն, Իլլուզիոն, Համբարձում, Վայոց-ձոր, Արմենակ, Ֆ. Գասպ., Տ. Գասպ., Թիրաֆ, Սակինեան 10-ական, Մելքիսեդ, Կարապետ, Սուքաշ, Ուզով, Զամուրեին, Մկրտիչ, Լուսին, Ղամբար, Ամբոխ 5-ական, Միքայէլ, Քացիան, Նախիքով, Սէրգէյ, Ղազար, Քէչիշեան, Մինայէն, Շաքար Գաբ. 3-ական, Շաքար Կ., Սուրէն 2-ական ռուբլի: Գումար 2040 ռուբլի:

Գահիրէի Ենթակոմիտէն՝

Հետեւեալ խմբերէ՝ Զարթիր 1908 փետրւար-սեպտ. 181 դրշ. ողջ եգիպտ., Անահիտ 1908 մարտ-սեպտ. 450, Կորիւն 1908 մարտ-օգոստ. 545, Ծաղիկ (1907 տարւոյ) 55, Էրնիյաս 1908 յունիս-օգոստ. 495, Կորիւն խ. համակիրներէ 75, Հարայէն (Հապէշիստան) Զաւին Հապէշիանի ձեռամբ հանգանակւած 146: Գումար 1947 դրշ. ողջ եգիպտ.:

Փարիզի Մարմին՝

Դաւիթից 20 ֆրանկ:

Մրզաստանի կենտր. կոմիտէն՝

ՔԱՐԱԲԵՐԴԻ ԵՐՉԱՆ 1908 Թ.—Հին-քաղաք՝ Տիգրան 25 ռուբլի, Սամսոն 10, Ծիվան, Բով, Որսորդ, Որսորդեանց, Խիղճ, Հէյտար, Մովսէս Բաբայեանց 8-ական, Պետօ 2, Մրրիկ 3, Լաւօ 2, Նիկալայ Մել. Ստեփանեան 2, Գրիգոր 3, Համբարձում Մովսէսեան 3, Համբարձում 2, Գալուստ, Յովհաննէս Ռ. Ղ. Փ., Տիտան, Սիմէոն, Սրճատէր Ոմն, Սատանայ 1-ական, Կօշկակար 50 կ., Յովհաննէս Դավր. 2 ռ., Մարտիրոս 1, Իշխան 1. 50, Ալեքսան Փանովիչ 1. 50, Լեւոն Տ. Պետր. 1, Ղեւոնդ Տ. Մարտ. 1 ռուբլի: Գումար 89 ռուբլի 50 կոպէկ:

Աւարայր՝ Առիւծ 10 ռուբլի, Ճղնաւոր 8, Երաժիշտ, Ատրճանակ, Էֆէնտի, Զինւոր, Հայրապետ Յովակիմեան, Բուլղար, Գեալոս, Փիլոս, Մարգար Դավթի, Եմխանայ, Յակոբ Հ, Սարգիս Ռ 5-ական, Մի ոմն 3, Կայծ, Կայծակ, Որսորդ, Բարսեղ, Երեսփոխ, Խղճուկ, Ռաշիդ, Համբօ 2-ական, Շագօ 3, Արծիւ, Բաբա, Յարութիւն Ե. 1-ական ռ.: Գումար 103 ռուբլի:

Մուրճ՝ Հմայնքից 60 ռուբլի, Տէր Պօղոս, Նիկողայոս Կար 3-ական, Մելիք, Սուրէն, Հայկանուշ, Աստղ, Ռաշպար 2-ական, Սարուխան, Ռաշիդ, Այգեպան, Քրիստափոր 1-ական ռ.: Գումար 80 ռուբլի:

Քարաբերդ՝ Վարպետ Փանոս, Վազգէն, Մի ոմն 2-ական ռուբլի, Ճաշարան 3, Ծառուկ, Մի ոմն 1-ական, Մի ոմն 50 կոպ.: Գումար 11 ռուբ. 50 կոպ.:

Կայարան՝ Երկրագործ, Պետոյեան, Տէրտէր 2-ական ռուբ., Երուսաղէմ, Արծիւ, Խանութպան, Օգնական, Կարճահասակ, Կառապան, Այգեպան, Պարսամ, Ռանչպար, Սրինգ 1-ական ռ.: Գումար 16 ռուբլի:

Մայիս՝ Ծերունի Աբրահամ, Արեգակ 3-ական ռուբլի, Հայրօ, Ատրճանակ, Կայծակ, Մեխակ, Զարբաշ, Խորէն, Քաջ 1-ական, Հայրիկ 70 կ., Ռոստամ 60 կ., Ծերունի, Մայիս, Զինւոր, Առակ, Խեղճ 50-ական կոպ.: Գումար 16 ռուբլի 80 կոպ.:

Ընդհանուր գումար 316 ռուբլի 80 կոպէկ:

Ալէքսանդրիոյ Ենթակոմիտէն՝

1908 յունւար 26-էն յուլիսի վերջ.— Հետեւեալներէ՝ Խոզանտառ 250 դրշ. ողջ, Փոթորիկ 492, Արուսեակ 785, Շաքէ 133, Խրախոյս քոյրեր 88, Ռազմիկ 237 1|2, Սերոբ փաշա 369, Թռուցիկ 126, Խոջան-Տաղի վիճակահանութենէն 47, Փոթորիկի վիճակահանութենէն 5, Նոյնին ձեռամբ հետեւեալներէ՝ Շ. Կամսարական 30, Կ. Զ. կայծակ 25, Կ. Չոլեան 15, Ե. Պալեօզեան 20, Ոմն 20, Դաւիթ 15, Հրայր 15, Փամպուգճեան եղբ. 15, Փրանգիւլ 15, Նուշ 10, Գաշքէմանեան 5, Կ. Մ. Զ. 5, Արարատ 16, Շմաւոն 5, Թ. Խաչատուրեան 5, Խենթ 5, Երգ 5, Վիշապ 5, Գ. Քէնտիկեան 10: Գումար 2773. 5|10 դրշ. ողջ:

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԺԸՆԵՎՈՒՄ

		Ֆր.	ս.
1.	Սոցիալիստի նամակները, ԱՐԱՐԱՏՍԿԻ.	1	—
2.	Աղեցոյց ընկերներին, ԱՐԱՐԱՏՍԿԻ.	—	30
3.	Ընդհ. կրթութեան թերութիւնները, Դր. Ժ. ՕԼԻՎԻԷ.	—	50

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Բաբկէն, Պետօ, Կարօ, Սերոբ-աղբիւր, Քրիստափոր, Վահան, Հրայր, Տարօնի Առիւծը և իր ձագուկները, Վաղարշակ, Թորգոմ, Խան, Կուռուպաշի նահատակները, Կարսի ուժանակի զոհերը, Վազգէնի մարտական խումբը, Բասէնի և Դէլի-Բաբայի կռւի ֆէդայիները։

ՀԱՏԸ 50 ՍԱՆՏԻՄ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ (*խոշոր դիրքով*) *հատը* 1 *ֆր.։*

Ապսպրանք 5 *ֆր.-էն պակաս չի ընդունւիր։*

*

Շուտով լոյս կը տեսնեն նոր 12 *մեծադիր պատկերներ։*

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Հայ յեղափոխական հերոսների պատկերներով։ Պատրաստի կան 36 *տեսակ։*

Բաց. նամակները կուղարկւին ամենաքիչը 3 *սէրիա* (108 *հատ*) 6 *ֆրանկ։*